

# Յ Ե Յ Ե Ր

Վ. Է. Ա

Պ Ե Ր Ճ Պ Ռ Օ Շ Ե Ա Ն Յ Ի:

Ն ու է ը Գ ա ը ը լ է ի Ս ու Ն ու ու կ է ա Ն ց ի Ն,

Նոյրա 25-ամաւոյ յօրէկեանի առթիւ:

## Ա

Ո Ւ Ր Բ Ա Թ Ա Խ Օ Ս.

Արարատեան նահանգի մեծ գիւղերից մէկի բնակիչ էր Պետրոսենց Սամիսոնը: Նա հօր մինուճար էր: Նա գիւղի պատուական համարուած երիտասարդներից մէկն էր. իգիթ, կտրիճ ջահէլների մէջ առաջիններիցն էր, ընկեր — հարեանի, թաշ ու թուշի (հաստէռէից) նիրելին էր, մեծ ու փոքրի պատիւը ճանաչող էր:

Սամիսոնը գիւղի առաջաւոր տների զաւակ չէր, բայց վերջիններիցն էլ չէր, միջակ կարողութեան տան որդի էր, յարգելի ու պատուելի մնագործ Գալօցի, կամ ինչպէս ամբողջ գիւղը կոչում էր, Գալ — ափուռի տղէն էր:

Ընկերական խմբակներում՝ երեկոյեան ոտքը խաղաղուելուց յետո՛յ՝ երբ փողոցները դատարկուում էին և երթևեկութիւնը մնում էր միայն ազափ տղէքանցը, Սամիսոնն անբաժան մասնակից էր:

Բայց նա գիւղը սասանեցնող խմբակների անդամ չէր, այն փչացած, լկտուած և զգուելի տանու դողերի, որ դուրսը դաշտումը մի զինաւորուած թուրք տեսնելիս՝ կամ քարերի տակ ու փոսերի մէջ

կը մտնեն կամ երկչոտութիւնից լեզուները կը կապուի, անցորդի ձիու ոտքի տակը կ'ընկնեն, պռօշները կը պատռուի, արիւնը կերթայ և ա՛յ, աղայ (ա՛ս, փէր) ասելով իրանց հրացանն ու զէնքերը միամիտ ճանապարհորդին կը տան ու կը գնան գիւղի մէջ կը պարծենան, որ Նղիկը, Խէչօն կամ Քեարամն իրանց թալանեց: Սամփսոնն ասում էր այդպէսներին, որոնք դուրսն այն աստիճան կնատ են վարուում, իսկ գիւղումը լեզուներն երկու դազ մեծացնում են, ո՛չ մեծ են հարցնում, ո՛չ փոքր, ամեն բանի մէջ խառնուում են, գոռում են, հայհոյում են, կռիւ են քցում և վերջը սպառնալիք տալով ժողովում են միասին, խորհում, թէ ո՛ւմ հանգստութիւնը խանգարեն, ո՛ւմ հաւերը գողանան, ո՛ւմ խոտի դէզերը, հասած բամբակի արտերը կրակ տան, ո՛ւմ այգու խաղողի պտղատու որթերը կիսահաս խաղողով արմատից՝ հողի բերանից կտրատեն, թափեն ու իւրեանց վրէժն առնեն:

Ո՛չ, Սամփսոնը հեռի էր այդպէսներից. նա պատկանում էր այն խմբին, որոնք տանը՝ գիւղամիջին Աստուծոյ գառն են, ծնողների ու ծերունիների հնազանդ, իսկ դուրսը աւազակների դէմ ճակատէ ճակատ կռուում են, մեռնում են՝ զնդակը կրծքից ստացած՝ կամ ցրուում են հրոսակների բազմութիւնը:

Սորանք էլ ունէին իւրեանց ժողովները. պատանեկական անմեղ զուարճախօսութիւնների ժողով էր այն. սրանք էլ իրանց հաշիւն ունէին— ո՛ւմ աղջիկն է սիրուն, ո՛րը ո՛ւմ բաղդ կը լինի, ո՛վ կարող է նազլուի աղջիկ Սիրամի սիրտը գողանալ, Սիրամի փոքր եղբօր ձեռքով նրան կարմիր խնձոր ուղարկել և այլն:

Էս խմբակի մէջ ամեն մէկն իւր սրտի գաղտնիքը յայտնում էր. մէկը պարծենում էր, որ եթէ չը տան՝ կը փախցնի, միւսն ուխտում էր սուրբ Կարապետի պասը եօթը տարի պահել, եթէ իւր սրտի առարկան իրան վիճակուի, մէկն ա՛խ էր քաշում, միւսը սիրտ էր տալիս, մի երրորդն էլ լուռ լսում էր:

Այս վերջինների կարգիցն էր մեր Սամփսոնը. նա միշտ լուռ էր, միշտ լսում էր, շատ շատ՝ մի բառով իւր կարծիքը կը յայտնէր: Այդ էր պատճառը, որ նա իւր ընկերներից ստացել էր «Ուրբաթախօս» մականունը և անդո՛հ չէր:

Եթէ յանկարծ ընկերի մէկը խօսքը Սամփսոնին դարձնէր ու

հարցնէր, թէ դո՞ւ ումն ես սիրում, այս կողմից միւսը ձեռաց մէջ կը խառնուէր, թէ է՛հ, դրան ի՞նչ ես հարցնում, չը գիտե՞ս, որ դա ուրբաթէ ուրբաթ կը խօսի, դա ճգնաւոր է, դրանը պատ օրն է:

Այդ նկատողութեան դէմ Սամփսոնը քթի տակին կը ժպտար ու կասէր, որ ուղիղ է:

—Մեր տղէ՛ք, մի եղալի թիքայ ա մենծանում, խօսք բաց արեց մի երեկոյ խմբակի անդամներից մէկը. էս ձմեռ Ալէքենց Բարսեղի աղջիկ Սօնէն իրար միս կռծելու պատճառ կը դառնայ. ինքը սիրուն, Բարսեղի էլած չէլածն էլ շալակին. նրա մէրն էլ պտղողը չի:

Լա՛ւ, որ սաստիկ մութը գիշեր էր, մի քիչ էլ ցուրտ էր, ամենքն էլ եափունջիքը գլխներին էին քաշել ու քչփշում, թէ չէ մեր Սամփսոնի կերպարանքից ընկերները կը վախենային:

Նորա անձի մէջ սարսուռ անցկացաւ:

—Մօտ եկողի սիրտ ու թոքը խանչալովս կը թափե՛մ, դուրս պրծաւ յանկարծ ընկերներից մէկը՝ Դօնդարենց Ասօն:

—Սրա՛ն մօտիկ տուէք, տօ՛, դու գգրի ձէն չես լսե՞լ, չե՞ս իմանում, որ Սօնէն մինուճար ա ու աշխարհքի մլքերի տէրը, դու քանի՞ գլխանի ես, որ գլաջնու, սուղիէքանց ու հարուստների ատամներիցը Սօնա դուս քաշես:

—Ձեզ ասում եմ, որ Սօնէն իմն ա, ոչով չի կարող տանիլ:

—Ը՛...ը՛...ը՛... մի շշուկ դուրս եկաւ Սամփսոնի բերանից, բայց նորա լեզուն կպաւ, ոչինչ չը կարողացաւ ասել:

—Ի՛նչ ես կմկմում, ա՛յ ուրբաթախօս, մի պտղունց բարութ ունիս քցելու, մի խօսք ունիս ասելու, ասա՛ ու պրծի էլի՛:

Սամփսոնը ոչինչ չի խօսում:

—Տօ՛, քեզ չեն ասո՞ւմ, ձեռքը քաշեց Ասօն, դու ի՞նչ մտքի ես, կարա՞մ տանել Սօնին, թէ...

Ասօն խօսքը չը վերջացրեց, նա յանկարծ ճչաց.

—Վա՛հ, մեր տղէ՛ք, սա մահուան դողմանի ա դիպել, մի տեսէք ի՞նչ օրումն ա:

Սուտ չէր ասում Ասօն. Սամփսոնը զընգըր-զընգըր դողացնում էր:

—Էս ի՞նչ ա տօ՛, հիւանդ հօ չե՞ս, կուզես՝ ցրուլինք, գնա՛ տուն, ամեն կողմից դարձան դէպի Սամփսոնը:

—Տղէք ջա՛ն, ձեզ մատա՛ղ, հազիւ մթմթաց Սամփսոնը:

— Ի՛նչ կայ, ի՛նչ պատահեց:

— Ասօ ջա՛ն, ինձ սպանի ու Սօնի անուամբ մաստաք մի՛ շինիլ, ծամիլ:

— Օ՛, հօ՛, քրքչացին ամենքը, տեսա՞ր արեւը ո՞րտեղ ա էլել մթնած. ա՛յ դու դարմանի տակի ջուր, մոքումի՜ բան ես ունեցել հա՞, ընդո՞ւր ես ուրբաթախօս, հասկացա՛նք, հասկացա՛նք:

— Ձեզ մատա՛ղ, լեզուն բացուեց Սամփսոնի, ընչանք օրս ես պտտիկ աղպօր պէս ձեր խօսքի մինն երկու չեմ արել, ջանս ուզել էք՝ չեմ խնայել, հիմի թէ աղպէր էք, էդ մի թւաւորն էլ թողէք իմ ականատի մէջն ընկնի, էդ մի աղջիկն ինձ բաժին հասցրէք:

— Քեզ փէշքա՛շ, քեզ հալա՛լ, քեզ ջարբա՛ (դարձեալ):

— Դու ի՛նչ ես ասում, Ասօ ջա՛ն:

— Ես էլ քեզ խաչաղպէր:

— Դէ՛ արի՛ մի պռօշտի անենք:

Սամփսոնն ու Սօն համբուրուեցան:

— Բայց մեր տղա՛յ, վա՛յ թէ քո ատամների համար թթու ըլնի, մեր աղէքը հիմի վաղուց մատնահաշիւն արել, պրծել են:

— Էդ ինձ թողէք՝ էն էլ մի պայմանով:

— Ի՛նչ:

— Խօսք տուէք, ձեր կտրիճ տղամարդութեան վրայ օրթում կերէք, որ էս խօսքն էս ուռու տակին թաղուի, քարը վեր կալէք, քարի տակը դրէք, հասարակութիւնի բերան չը քցէք, վերեն Աստուած գիտենայ, ներքեւը մենք՝ էս չորս հոգիս:

— Սեւերես ըլնի՛, ընկերի մօտ թո՛ւք, խա՛ղք ու խաչտաւա՛կ մնայ, իզիթ (չա՛լ) տղամարդ չ՛ըլնի, դոտակի տեղ լաչակ ծածկի, ով որ բերանիցը հանի, ձայն ձայնի տուին տղէքը:

— Ու ո՛վ որ էլ գլուխը յետ չը դնի, մեր Սամփսոնի ուղուրին չը կանգնի (չօգնի), երբ որ իր սիրտը կ՛ուզենայ:

— Ամէ՛ն, ամէ՛ն:

— Պայմանը մի մին պռօշտի ա:

— Թող ըլի՛:

— Զբը՛ւ, չբը՛ւ, կբը՛ւ, կբը՛ւ և բարի գիշե՛ր:



## ԱՐՏԵՄ ՍԷՐԳԵՅԻՉԸ.

Մի մեծ և խոր ձորի վերայ է շինուած Օ. գիւղը: Ձորի քարափի վերայ է հինաւուրց պատմական բերդը: Բերդի աւերակների վերայ է այսօր գլուխը ցցել ու պարծենում Գոմշակերենց Արսոյի խամքարէ ու ցխէ տունը: Կոփածոյ բերդ, վրէն հողէ տուն — կարմիր մետաքսեայ թանկագին շորի վերայ պառաւ տառի հաստ իլկով մանած ու իր տղայ ծուններես Խնգոյի գործած խամ սպիտակ կտակէ կարկատան չէ, ի՞նչ է բաս:

Ուրախ է Արտօն, կամ առաւել լաւ է, իւր պատուանդունովը կոչենք, Արտեմ Սէրգէյիչը, իւր պալատովը: Նա առանց բաւականութեան չի պառկում իւր հրահրիճ կոչուած սենեկի վերի կողմը և լուսամտից ականջ դնում ձորի խորքում հոսող գետակի քրքչոցին:

Ձորս սենեակներ ունի տունը: Նորանցից երեքը ընտանեկան կառավարութեան են յատկացրած, իսկ ամենամեծը՝ դահլիճը, կամ ըստ Արտեմ Սէրգէյիչի զաւան բարձրատիճան հիւրերի համար է: Ներսի սենեակները կահաւորուած են տեղական սովորութեան համեմատ. հողէ յատակի վերայ փռուած է եղէգնեայ խսիր, վրան ծածկած կամ հասարակ կարպետ կամ քրդի թաղիք, իսկ դահլիճը բացառութիւն է կազմում. նա զարդարուած է կիսահայկական, կիսաեւրոպական ճաշակով:

Մի քանի դիւրագին աթոռներ՝ մէկի ոտքը դուրս եկած ու շորի փալատով ամրացրած, միւսի գլխի տախտակը պակաս՝ շարուած են անների բարդի ծառից քաշած տախտակի յատակի վերայ. մի հասարակ սեղան, խառատ Աւետիսի. ճարտարարուեստութեան ապացոյց՝ բազմացրած է ձորակողմի լուսամտի առաջին. նորա վրան ծիծաղում է մէջը նայողի երեսին՝ նոյն Աւետիսի հանճարեղ ուղեղի ծնունդ բոլորակ հայելին, աջ և ձախ կանգնած իւր պահապան հրեշտակներով՝ նոյնպէս ուստայ Աւետիսի շինած լնկուղեայ աշտանակներով:

Դահլիճի միւս կողմը Վրաստանին յատուկ մի տախտ բռնել է սենեկի կէսը: Ծախտի վերայ փռուած են երկու հատ քրդի թաղիք, երկու թարաքեամի կարպետ և պսակն այդ շռայլութեանց մի փամ-

բակեցի կամ Վայոց ձորեցի հայ կնոջ գործած գորգ վրայից ծածկած:

Դահլիճի պատի դրսի կողմից՝ ձորաթմբի ապառաժ ժայռի միջից, կարծես դուրս է ցցուել կիսախարսուկ պատշգամբը: Հրաշալի է տեսարանը, աննման է այդ տեղից բնութիւնը. առաջի ձորն իւր կարկաշատ գետակով, լեռնաչափ քարափները՝ սուր ու խորդուբորդ ծալքերով, դիմացի բլուրներն՝ իւրեանց լայնարձակ հովիտներով հիանալի են: Աննկարագրելի է մանաւանդ դարնան պարզ երեկոյին, երբ բլրներից ամենաբարձրի ետեւից նազաճեմ դուրս է գալիս գիշերի երկնային ճաճանչաւորների պսակը՝ 15 օրական ժպտած իծաղ լուսինը և պատշգամբի առաջի ձորից վեր բարձրացած՝ հսկայական բարդիների ճիւղերի տերեւների միջից հազար և մի կտորներով լոյսեր է սփռում մինչև դահլիճի խորքը:

Արտեմ Սէրգէյիչն իրաւ որ ճաշակի տէր է. էս ժամանակները նա միշտ ճրագը հանգցնում է իւր հիւրերին ամենամեծ զուարճութիւն պատճառելու համար: Երեք խօսքով է նա իւր սրտի անչափ բերկրանքը արտայայտում. *ВЕЛИКОЛЕПНО! ЧУДНО! БЕЗПОДОБНО!*

Ինքը՝ յարգելի Արտեմ Սէրգէյիչը բնիկ Օ. գիւղացի է: Վարժ խօսում է ռուսերէն և շատ յաճախ էլ հայերէն խօսելու սիրում է ռուսերէն խառնել՝ օրինակ *«ЧЕСТНОЕ СЛОВО»*, *КЛЯНУСЬ ЧЕСТЬЮ*, *ПОДЛЕЦЪ Я БУДУ»* և այլն:

Հարկաւոր չէ դիմացի մարդին գիտենալ ռուսերէն. Արտեմ Սէրգէյիչի համար այդ մի և նոյն է, նա վարժուել է այդ ձև խօսակցութեանը և շատ անգամ խօսքերն անգիտակցաբար են դուրս թռչում նորա բերանից:

Արտեմ Սէրգէյիչը մանկութիւնից բացակայ է գտնուել իւր հայրենի գիւղից. նա ծառայել է զանազան արքունի կապալառուների մօտ, վեր ու նիստ է արել շատ աստիճանաւորների ու ղազախների հետ, շատերին ծանօթ է, ինչպէս ինքն ասում է՝ բոլորի հետ *«НА ТЫ»* է:

Արտեմ Սէրգէյիչն իւր գիւղացիների մէջ էլ պատիւ ունի. նա շատ քաղցր, քաղաքավարի և աղ ու հացով մարդ է. մեծի հետ մեծ, փոքրի հետ փոքր, իւր անուշ լեզուովն, անմեղ կատակներովն և զուարճախօս յատկութիւնովն ամենի սիրելին է:

Եթէ Արտեմ Սէրգէյիչն իւր երիտասարդութեան թարմ ոյժը գործ դրեց իւր հայրենի ծննդավայրից դուրս, այսօր խոհականութեան և փորձառութեան տարիներում, մօտ 50 ձմեռներ ճանապարհ դրած՝ Մասեաց գլխի նման ջինջ սպիտակացած՝ իսկ դէմքի կայտառութեամբ դեռ զուարթ՝ դեռ ջահէլների կարգումը՝ նա մեծամեծ ծառայութիւններ է անում իւր մանկութեան օրօրանին:

Այսօր իշխանութիւնից մի հրաման եկաւ՝ Արտեմ Սէրգէյիչն է կատարելու ձեւը ցոյց տուողը: Վաղը մի գործակալ, մի առաջնորդ, մի պատուէլի հիւր այցելեց գիւղը, Արտեմ Սէրգէյիչն է հիւրասիրում, պատուում, նորա արձակած սուրբ Աթոռի հրամանը կատարել տալիս և յարգանքով ու լիաբուռն աջահամբուրով ուղևորում: Արտեմ Սէրգէյիչն իւր ընտանիքի մէջ էլ պատուական մարդ է. օրը հինգ անգամ տուն կը գալ իւր սիրելի լծակցի պայծառ երեսը տեսնելու, դեռ պատշգամբը չը բարձրացած՝ ձայն կը տալ — Մաշուրկա՛, զօլուբուշկա, Մա՛րան ջան, թա՛ւլան ջան, կնի՛կ ջան, գալիս եմ: Այս բանը գիւղի և դաւառի ժողովրդի հասկացողութեամբը շատ ամօթ բան է. տղամարդին ի՛նչ կը սաղի իր կնոջ հետ ատամները բաց անել, հանաքներ անել, ջան ասել. տղամարդն ո՛վ, կանանց գործերի մէջ խառնուիլն ո՛վ, նրանց հետ վեր ունիստ անելն ո՛վ. մարդը պէտք է մարդ լինի, ինչ որ մարդին կը պատկանի. բայց Արտեմ Սէրգէյիչը ոչ միայն իւր սեպհական կնոջն էր ջան ասում, ջան լսում, ուրիշների հետ էլ միևնոյնն էր. նա էս բնաւորութիւնովը գաւառի մէջ մի բացառութիւն էր կազմում. նա տանիցը մինչև փողոց դալն ամեն մի պատահած կնոջ հետ հաճոյախօսութիւն էր անում, քաղցր բարի լոյս էր տալիս, ժպտալով՝ հարսի՛, քիքի՛ր (խոյրի՛), նանի՛, քեռու աղջի՛կ, սանամէ՛ր, քաւորակին բառերն էր շուայլում. օրիորդներին էլ ուղղակի՝ աղջի՛ Մարգարիտ, Ալմաստ ջան, խնամու աղջիկ խօսքով էր պատուասիրում, պառաւների առողջութիւնն էր հարցնում, ջահէլ հարսների հետ նրանց մարդկանց անշնորհքութեան վերայ էր խօսում, պատուիրում էր գիշերը հետը չը խօսել, երեսը շուռ տալ, խռովել, աղջիկներից տեղեկութիւն էր պահանջում, թէ ո՞ւմ տղի վրայ աչք ունին և այլն, և այլն:

Բանն այս է, որ նա ոչ մէկի հետ կանգ չէր առնում ճանապարհին. հարցմունքները իրար քամակից հետևում էին քայլերին.

իսկ որ ամենից նորանշան երևույթն է մեր աշխարհքի համար՝ մեր չխօսքաններին ոչ մէկը նրանից չէր ամաչում, չէր քաշուում և անպատասխան չէր թողնում. պառաւններն ուղղակի—ողջ կենա՛ս, քեզ մատա՛ղ, Արտօ ջան՝ էին պատասխանում. ջահէլներին շատերը քաղցրաժպիտ աչքերով, քնթկալները քթից ցած՝ թողած՝ սիրուն ատամները ցոյց տալով՝ մի կիսաձայն հաճոյախօսութիւնով նախատում էին նրան, որ իրանց գլխաւորի անունը բերանը չառնի, ծիծաղատեղ չը շինի: Աղջիկներն էլ բաւականանում էին համեստօրէն ժպտալով և գլուխ տալով: Մի խօսքով, մեր յարգւորները Արտեմ Սէրգէյիչին հօր, եղբօր և մերձաւորի պէս էին ընդունում և սիրում, և սէրը սրտանց էր:

Անկարծի՛ք, ոչ մի տղամարդ, ծեր, երիտասարդ, երեխայ էլ չէր մնում գիւղումը, որ նորա քաղցր բարևին չարժանանար և մի քանի խօսք էլ նրան ասելու կամ նրանից լսելու բաղդը չունենար:

Արտեմ Սէրգէյիչն, ինչպէս ասացինք, արդէն 50-ին մօտ սպիտակագլուխ ծերունի էր, (երեսի համար մի՛ հարցնէք, ես միշտ նրան երիտասարդ էի տեսնում, անբեղ, անմիրուք. անիծածը բեղ ու միրուք օրը մի անգամ իր ձեռովն ածելում էր), բայց գիւղի շատ ավերներ նրան որդու տեղ էին ընդունում և դէմ ու դէմ Յարթօ, Յարթու՛ն կոչում՝ նորա մանկական անունով: Ընդհանրապէս գիւղին և գաւառին Արտօ անուամբ էր ծանօթ, վերջերումը մի քանի ուրիշ գիւղեր աղայ բառը պոչիցը կարկատեցին, իսկ նոր քաղաքակրթութեամբ և լուսաւորութեան համար նա Արտեմ Սէրգէյիչ էր. միայն տէրտէրներն ու հայոց ծխական ուսումնարանի վարժապետներն են պ. Յարութիւն հայ խօսքով նրան մեծաբանում, և ի պատիւ մեր Արտեմ Սէրգէյիչի պէտք է ասենք, որ ինքն էլ իւր կողմից մաքուր հայ գրականական դարձութեան քննարկով քահանային ու վարժապետին զիտէ գոհացնել:

Ասացինք, որ Արտեմ Սէրգէյիչն իւր հայրենի գիւղին մեծ ծառայութիւններ է արել. սուտ չասացինք: Դեռ նոր էր նա եկել հանգստանալու մի քանի ժամանակ իւր ընտանեկան յարկի տակ, երբ առաջին անգամը մասն գիւղական ինքնավարութիւնները: Հասարակութեան ընտրած անդրանիկ տանուէրն Արտեմ Սէրգէյիչն եղաւ. նա միաձայն սպիտակ քուէ ստացաւ, ամբողջ հասարակութիւնը զրկաբաց ընդունեց նոր օրէնքները, նրանք աղատուեցան հին տանուտէրական ճշունեւորից: Առաջները՝ ո՛ր գրպանից զնդոցի ձայնը

բարձր էր ղողանջում, նա՛ էր ճիպոտը ձեռքն առնում, գլուխ ջարդում, այսօր համայնքն իւր յօժար կամքովն Արտեմ Սէրգէյիչի պէս մարդին է իւր համար գլուխ ընտրել:

Մեծ էր լոգևորութիւնը. ամեն բերան օրհնում էր բարերար օրէնքը, մանաւանդ՝ երբ Արտեմ Սէրգէյիչն իւր հանձարեղ կառավարութիւնով ապացուցեց սուրբ օրէնքի գերազանցութիւնն և փրկարարութիւնը:

Գլուղի փողոցները մաքրուեցան տարիներով դարսուած աղտոտութիւններից. գիւղն ազատուեցաւ ընտանի ցեցերից, կաշառակեր տանուտէրներից, երեսպաշտ իշխաններից, աղքատին խեղդող զգիրներից, տանու գողերից և հարամկեր հարկաժողովներից. մեծ ու պստիկ մէջ փոխադարձ սէր, յարգանք և պատուապահութիւն մտաւ, վերացան գլուղից սովորական, անվայել յիշոցներն ու անկարգ զրոյցները, ամեն մարդ իւր պարտքը ճանաչեց, իւր հերթը հասկացաւ. էլ հարուստն ամիսներով անվրդով չէր պառկում, քնում, իսկ աղքատն երեք օրը միանգամ զիշերապահութեան հերթ կատարում:

— Գլաջի աղա՛յ, գալիս էր մէկը և զտակը վերցնում, բերանը բաց անում՝ զանգատ անելու...

— Զէ՛, գլաջի մի՛ ասիլ, տանուտէր խօսք կայ, դու տանուտէր ասա՛. դու քո ոտը իմ կարպետին մի՛ մեկնիլ, իմ լեզուն վատ է սովորել, ընդհատում էր Արտեմ Սէրգէյիչը:

— Տանուտէ՛ր, էս օր ջրի հերթն իմն ա, փալանդուզ Պէտօն ինձանից ջրգլխի ա, իմ ջուրը կտրել ա, իր պօլօճիկը ջրում:

Գզիրը վազեց, Պէտօյին բերեց:

— Ծա՛կը, հրամայում է անաչառ տանուտէրը:

Պէտօն բանտարկուեցաւ:

— Տանուտէ՛ր, Մէլիք-Բադալի կոյն ընկել էր լմ բամբակի արտը, դուս էի անում՝ Մէլիքը վրայ հասաւ, վրէս բարկացաւ, ինձ շան որդի ասեց:

— Ուղի՞ղ է, Մէլիք-Բադա՛լ:

— Տօ՛, դրա հէրն անիծած.... ուզում է բացատրութիւն տալ Մէլիք-Բադալը, բայց խեղճի խօսքը բերանումը մնաց. տանուտէրն աչքով արեց, զգիրն ական թօթափել Մէլիքի արծաթէ զօտին արձակեց ու մի մանէթի փոխարէն գրաւեց:

—Տօ՛, շան տղայ գզի՛ր, բարկանում է Մելիք-Բաղալը, դու քանի՞ գլխանի ես, որ ինձ դիպչում ես:

Նորից տանուտերի աչքը ճպպաց, գզիրը վազեց Մելիքենց տունը, մի պղինձ վերցրեց, գիւղամէջ բերեց և վաճառ է հանում:

—Խնչ բանի ես, Արտօ՛:

—Այո՛, Մելիք ջա՛ն, իմ աչքի լո՛յս, իմ գլխի տէ՛ր, հերիք որքան մինչև օրս բերաններիդ անսահման իրաւունք էք տուել. այսուհետև հայհոյանք անելու, ուրիշին պակաս խօսք ասելու իրաւունք չը կայ, ուշուցի խօսքը մի մանէթ է, **НѢТЬ, НЕ ПУЩЬ!**

—Հանաք հօ չե՛ս անում, Արտօ ջա՛ն:

—Գլո՛վադ վկայ, սիրակա՛ն, և տես, որ խօսքս ուղիղ է:

—Հասարակութի՛ւն, դառնում էր տանուտէրը դէպի խուժանը. այս պղինձը գնահատում եմ մի մանէթ, ո՛վ է աւել տալիս, **КТО БОЛЬШЕ?**

Սկզբներումը դեռ անմեղ կատակներ էին կարծում՝ այն ամենօրեայ քաղցրախօսութիւններից հետևեցրած՝ որ Արտեմ Սէրգէյիչն ու Մելիք-Բաղալը բարեկամական սեղանի վերայ իրար հետ անում էին, բայց երբ տանուտէրը հաւատացրեց, որ ասածն օրէնքի հիման վերայ է, ոչ ոք Մելիքի ահու ձայն չը տուեց, բայց սպասում էին տեսնել, թէ տուտը ո՛րտեղ ա կորուելու:

—Ո՞վ է աւել տալիս, կրկնեց տանուտէրը:

—Մի մանէթ հինգ կոպէկ ինձանում, ցած ձայնով ասեց կանգնողներից մէկը:

—Դու ինձ վա՛յ տաս, հարամիների աման լպտտող Խուղօ՛, ատմները կրճտեց Մելիքը, դու հիմի մարդ ես դառել, մարդամէջ ես մտել, որ Մելիք-Բաղալի պղինձը տօլկով (**мзлае**) առնում ես էլի՞:

—Ձայնդ քեզ քաշի, Մելիք-Բաղա՛լ, պաշտպանեց տանուտէրը, Խուղօն է՛լ իրաւունք ունի, ամեն մարդ է՛լ:

—Մի մանէթ հինգ կոպէկ, **КТО БОЛЬШЕ?** նորից ձայնը բարձրացրեց տանուտէրը:

Ոչ ոք ձայն չը հանեց:

—Մի մանէթ քսան կոպէկ ինձանում, այս անգամ ինքը տաւուտէրը աճրդի մէջ մտաւ: Եւ որովհետև Խուղօն խռովեց ու յետ

քաշուեց, պղինձը մնաց իրան՝ տանուտէրին: Հանեց նա գրպանից մի մանէթ քսան կոպէկը, տուեց զանձապետ դատաւորին, իսկոյն մանէթը տուգանքի սոմարի մէջն անցկացրեց, աւելորդը տուեց Մեկիք-Բաղալին:

—Է՛, մեր տղէ՛ք, եթէ Մեկիք-Բաղալի լեզուն բռնը մտաւ, մենք մեր գլխի ճարը տեսնենք, լեզուներիս սանձ դնենք, ասացին ամենքն ու հայհոյանքի տոպրակը զիւղական դատարանի շեմքի տակին թաղեցին:

Խեղճ Մեկիք-Բաղալը բաւական տուժեց: Վեց ամիս էր Արտեմ Սէրգէյիչը տանուտէր էր և Մեկիքն ամենից շատ տուգանքը տուեց, բայց ի հարկէ, նա տանուտէրից չէր նեղանում, իւր վատ սովորած լեզուին էր մեղադրում:

Հախ Աստծո՛ւ, ինքը Մեկիք-Բաղալը վատ մարդ չէր, բարեսիրտ էր, զուարճախօս էր, սրախօս էր և գիւղի սիւններից մէկն էր, գիւղի համար գլուխը դրած ունէր, մեծ ու պստիկ, իրաւորի—օտարի, հէքիմ—դատաւորների առաջին էլ խօսքը դուրս էր գնում: Միակ վատ բնաւորութիւնն այս էր, որ չէր կարողանում թարգը տալ թագուն, աշկարայ ձեռքն ընկած տեղից մի շնչին կաշառք վերցնելուց: Այդ իւր անցեալ տանուտէրութեան երջանիկ օրերի սովորութեանց հետեւանքն էր, իսկ միւսը՝ առաւել վատթարը՝ նա չէր կարողանում լեզուն յետ սովորցնել ուշունցնատուութիւնից. արշալոյսից մինչև վերջնալոյս՝ շարունակ ուշունց էր դուրս գալիս բերանից: Վնաս չուներ, նրա ուշունցից ոչ ոք խամ չէր և չէր էլ նեղանում, բայց խեղճին էժան չէր նստում:

Թոյլ տանք Մեկիք-Բաղալին ինքը պատմի իւր ցաւը:



# ԽՕՍԱԿՑՈՒԹԵԱՆ ԱՂԸ.

Օ. գիւղը իրարանցումի մէջ է. տանուտէր Արտեմ Սէրգէյիչն իր գլուխը չի ճանաչում, գգիր ու եասավուլ, առուազ (Զրդեք) ու գիւղումը հաց կիտելու համար յետ ընկած նախր: ի՛ բոլորը գործի մէջ են, տանուտէրի, սուղիէքանց և հարուստների տներում էլ թանկագին կարպետ ու խալիչայ չի մնացել՝ կրուում են դէպի ձորը՝ բազմադա-

րեան կամրջի ականջին զոնուած ծառուտը և փռուում կանաչ խոտերի վերայ. վերի կողմը տարածած է փափուկ մահիճն և վրան դրած երկու հատ պատուական մութաքայ: Հեռուումը մի ծառի տակի մորթուած է պարարտ ոչխարը, սարքուած են օջաղին պղնձներն և շարուած են փայտեայ դալար շամփրների վերայ խորովածները: Գետի ափին բղխող ականակիտ աղբրի ակնումը շարուած են կարմիր գինիով լիքը շիշերը:

Ահա եկան Օ. պիւղի բոլոր իշխանները: Ահա և հաստաշլինք Պապի Գէվօն շապկանց՝ մինչև ծնկները բաց, մսոտ և մազոտ կրծքի վերայ մանկամարդ կնոջ ստինքներից մեծ մեծ ծծերը կախ քցած, թօռի պարանը երեք տակ կռնատակովը վիզը ձգած՝ վայր դրեց թաց թօռն և հրամայեց իր օգնական գէլխեղդ Թորոսին ձիու տուպրակը գետի ջրի մէջ դնել մինչև ինքը կը հրամայի:

— Եկա՛ւ, եկա՛ւ, ձայն տուեց հեռուից քարափի վերայ կանգնացրած պահապանը:

Ամենքը յառաջ վազեցին. տանուտէրը բոլորի գլխին ծառուտից դուրս կանգնած էր:

— Գտա՛նե՛րդ, ձայն տուեց տանուտէրն և յառաջ վազեց:

— Բարե՛ ձեզ, ձիուց ցած թռչելով՝ բարձր ողջոյն տուեց թանկագին հիւրը:

Դա գաւառի նաչալնիկն էր:

Նա միայն չէր. մի քանի աստիճանաւորներով էր շնորհ բերել:

Նա այս անգամ պաշտօնական գործով չէր եկած: Այսօր նա

Օ. դիւղացուց հիւրն էր:

Շատ տարի էր նա նաչալնիկ էր և տարէն մի անգամ այս քաղցր աղբրի ջուրը խմում էր:

— Բարի՛, հազար բարի՛ ես եկել, աղայ ջան, մեր գլխի՛ մեր աչքի վրայ ես եկել, յառաջ եկաւ Պապի Գէվօն՝ թօռի մէջ կողած մի ահագին մեծութեամբ լիպլտալով կարմրախայտ ցած թողելով կանաչի վերայ, քեզ փեշքե՛շ, աղայ ջա՛ն, 20 տարի ա, գլխիդ մեռնե՛մ, ես էս գետի ափն մի քարի տակը, ափն մի խոր գետի ձկան ծուարատեղը տարին հարիւր հետ քրքրել եմ, խօլխօլել եմ ու դեռ էս չափին կարմրախտ տեսած չեմ, անմահական ա, անմահական, հոգահա՛մ ա, հոգահա՛մ, թիքէն մի պաճախլու ափի, տեսնում ես,

աղայ ջա'ն, ո'նց ա թուպուտալով ոտդ պաշում, որ հրամայես՝ իրան մատաղ անեն ոտիդ տակին ու իր զրդրճան քեալլէն քո հրամանքդ անուշ անես:

— Ննորհակա'լ եմ, Գէորգ, քո կալած ձկներն ես ամեն տարի էս ծառերի տակին կերել եմ, ոչ մէկն անհամ չի եղել:

Նաչալնիկը հինգ մանէթանոցը մեկնեց Գէվոյին:

— Տո՛ էս թղթի կտորն ինձ ի'նչ պտի տաքացնի, աղայ ջա'ն, սաղ օրը ջրումը թրջուած մուկն եմ դառել, մրսել եմ, մի քո օրհնած բերանովդ հրամայես, մի թաս քրտնքի դեղ տան, ոսկորներս տաքանան, աւելի լաւ ա:

— Արտեմ Սէրգէյի'չ, մեր Գէորգին մի թէյի բաժակով արա՛ղ:

— Էդ ա է՛, ջօմարդ մարդի բերնին մեռնե'մ, ասեց Գէվօն, առաւ ձեռքն արաղն և՝

— Աղա՛յ ջան, քո կենացը:

ձաշի թէթ ժամանակն է. սեղանի ծաղիկը Մելիք-Բադալն է, ամեն մի բաժակի վերայ նա երկար ատենաբանութիւն է անում և բոլորին ծիծաղացնում:

Նաչալնիկն իր կողմից խմեց Օ. գիւղի հասարակութեան կենացը և մի կարճ յորդորով կշտամբեց նրանց անտարբերութիւնը՝ նոցա անուսումնասիրութեան առթիւ:

Նաչալնիկը դարձաւ դէպի Մելիք-Բադալն և ասաց.

— Իսկ դո՛ւ, Մելիք-Բադալ, միանգամայն մեղադրելի ես, լեզուդ ասեմ, թէ դործդ. քո աչքն ի'նչպէս է վերցնում, որ այսօր ձեր գիւղումն ուսումնարան չը կայ:

Այդ ժամանակ դեռ տարրական դպրոցի հարցը վերջնական ելքի չէր հասել:

— Նաչալնիկ աղա՛յ, գլխիդ ու արեւիդ մատա՛ղ, տեղիցը կանգնեց Մելիք-Բադալը, հրամանք արա՛ մի երկու խօսք ասեմ, սրտիս փութը դարտակեմ, յետոյ աչքս հանի:

— Իրաւունք եմ տալիս:

— Նաչալնիկը հաստատ կենա՛յ, քեզ էլ յայտնի ա, որ մենք հէրենական, պապենական բռի, անտաշ գեղըցի ենք, ուսումնարան չենք մտել, քաղաք տեղ չենք ման եկել, կոպիտ, վայրենի ենք, էշ

կերել ենք, էշ մենծացել. գեղըցունը որ կայ՝ իր աշխատանքն, իր ժամն ու տաւարը, իր օրհնութիւնն ու ուշունցն ա. ասում ա՝ խէրն ու շառն աղպէր են, էնպէս էլ օրհնէնքն ու ուշունցը մի հաւաք մօր ջիտակներ են, մենք ոչ աղէքանց ու քաղքցոնց պէս կարանք առանց ժամ գնալ մնալ, ոչ առանց ուշունց տալու համբերիլ. ժամիցը դուս գալուս մեր «օղորմի Աստծու» հետ «շան որդին» էլ մէկէլ ատամի տակիցը պէտք ա դուս սլալ, ուշունցը մեր խօսք ու ջրըցի, մեր խօսակցութիւնի աղն ա, անաղ կերակուրը համ չի ունենալ, էնպէս չի՛, աղա՛յ ջան, ջանի՛դ մեռնեմ:

— Լա՛ւ, հիմի խօսքդ ի՛նչ ա:

— Զէ՛, դեռ մի հրամանք արա բարի բերանովդ; սուտ ա՞, թէ զորթ:

— Ասենք թէ ուղիղ ես ասում, գիւղացին ու նաչալնիկն երկուսն էլ առանց ուշունցի չեն կարող կառավարուիլ:

— Հա՛, դէ տեսա՞ր, որ գլուխս ճշմարտախօս մարդի ոտի տակին փարվան կանեմ: Դէ՛, աղայ ջա՛ն, դէ՛ հիմի արի, երկար խնկրովդ դատի, մեր դրութիւնի մէջը մտի՛ր, մեր հալն ու ափալն (գրո-նիւնը) իմացի, մեզ խեղճ արի, մեզ էս բաբելական կրակիցն աղատի՛, էրուած ենք ողջ հասարակութիւնով: Ես ա վեց կօլօլ ամիս ա, քանի էս նոր օրէնքները դուս եկան, մեր Յաթօն մեզ շամփուրն ա քաշել, բռնել մարմանդ կրակին, ոչ մի անգամ խորովում ա, մոխիր շինում, ոչ էլ կրակն ա հանգցնում, մեզ հովութիւն տալիս:

— Ի՛նչ Յաթօ, Մէլիք-Բադա՛լ:

— Տօ՛, էս մեր... Ը՛մ... Ը՛մ... Ը՛մ... էս... շ... շ... շ... մեղա՛յ, մեղա՛յ, քիչ էր մնացել երեխեքանցս էս օրուայ ապրուստը շան ու գիլի բաժին էի անում... ո՛չ, ոչ, մեղա՛յ Աստծու... ծամծմոտեց Մէլիքը, էս մեր պարոն Յաթօն, մեր տանձուտէր գլաջնին, որ իմ մենծ տղիցը վեց ամսով ու երեք օրով պստիկ ա, ախար սա Զիք-չորեքաթի օրն ա ծնել, ա՛յ չքուի սրա գլուխը...

— Մէլիք-Բադալ, համեստօրէն ձայն տուեց տանուտէրը, մանէթը գլորուեց:

— Դէ՛, աղայ ջա՛ն, լսեցի՞ր. դարձաւ բազկատարած Մէլիքը նաչալնիկին:

— Ես բան չը հասկացայ, ուսերը թափ տուեց նաչալնիկը:

— Զէ՛, դու ինձ ասա՛, էս խօսքի համար աժի, որ մեր աղայ զլաշին ինձանից մի մանէթ շորա՞նք խլի՞ր:

Նաչալնիկը զլխի ընկաւ. նա, դիցուք, վաղուց գիտէր Մէլիք-Բաղալի ցաւը:

— Ես քեզ լիակատար իրաւո՛ւնք եմ տալիս, ասաց, էս ձորի ծառերի շուաքումը, էս սառն աղբրի մօտ, էս գետի ափումը, էս բաց երկնքի տակին. ոչ ովից չը քաշուես, ի՛նչ քո սրտի ցաւն է, յայտնես, ի՛նչ սիրտդ քեզ իրաւունք է տալիս՝ չը խնայես. մի՛ վախիլ, ոչ ով քո փէշին էս օր չի կարող դիպիլ, էս օր քեզանից ինչքան տուգանք խլեն, իմ վզիս:

— Հա՛, Աստուած որդիքդ պահի՛, հիմի կասե՛մ, հիմի թող ինչ-քան ուզում ա բուայ մեր բայցուշ Յաթօն, դուայ մեր ագուաւը:

— Ա՛յ մարդ, Մէլիք-Բաղա՛լ, ժպտալով դարձաւ նաչալնիկը, ընչի՞ր ես մեր տանուտէր Արտեմ Սէրգէյիչին անպատուում, քաղաքավարի անունը տաս ի՛նչ կը լինի. մէկ՝ որ տանուտէր է, մէկ՝ որ քո ազգականդ է և միւս էլ՝ որ գիւղի ու դաւառի մէջ պատուելի աղայ մարդ է:

— Տօ՛ քեզ մեռնեմ, քո սուլթան բալէքանցը (արդուցը) մեռնեմ, ախար դա ո՞ր տեղի աղէն ա, ախա՛ր ոնց որ ասում էի ու բերնիս եկաւ, դա իմ հօրօղպօր թող՝ ողորմածիկ Սաքօյի տղէն ա. էդ չքուելուն լիս աշխարհք եկաւ Զիք-չորեքշաբթի օրը՝ առաւօտէն ծէգը քցելու: Խալիսին տղայ ա ըլնում՝ ուրախանում են, համա մեր խեղճ Սաքօն ամպեց ու մրրած երկնքի պէս աչքերիցը թափեց, ի՛նչ ա՛ թէ հէնց էս Զիք-չորեքշաբթի օրը պտի ծնէ՞ր, որ մի օր յառաջ կամ մի օր յետն էր արշայ ընկել (էրեւոյել)՝ աշխարհքը կը քանդուէ՞ր, մեղք կը լինէ՞ր. համա չէ՛, փխը փիս կըլնի. էն օրն ա՛մեն բան չքուում ա, սա գլուխը դուս ա պրծացնում: Ի՛նչ և իցէ՛, բերինք Զատիկ օրը մկրտեցինք, որ Զիք-չորեքշաբթու շորշօփը վրիցն անցկենայ, վեր կայանք անումը դրինք Յարութիւն: Դէ՛, մեր տըներումն ո՞վ ա երեխին Յարութիւն կանչում, անումն էլ երեխի հետ պտի կամաց-կամաց մենծանայ. մինը Յաթօ ասեց, մէկէն՝ Յարթեն, մենք էլ ա՛յ թող և (ա՛յ շնի՛) էինք կանչում ու ձեռներիս թռցնում, ուրախանում: Եկաւ՝ որ սա ընկաւ Երևան՝ ռաների մէջը, ընտեղերանք ի՛նչ արեց, ի՛նչ չարեց, քանի՛ փողրաթու աչքեր հող ու մոխիր

փշեց, զազախին հողախառը հաց ուտացրեց՝ փորահարինք քցեց, նրանց ձիանոնցը ջուրն ընկած դարով ուռցրեց՝ սպանեց, իր ջէբը տուգացրեց. մի օր էլ տեսնենք՝ մի քանի իրպէսներին՝ Երևանի ջահէլ ջուհուլին հաւաքել ա, բերել դեղը բարեկամների տներումը սրապատիւ տալի, մի շաբաթ քէֆից աչք չի բաց անել տալիս, մեր հաշուովը զօնադներ ա ման ածում, թէ ի՞նչ ա, սաքի պատիւ եմ տալիս. դու մի՛ ասիլ, սա դրանց բերել ա, որ դրանց բերնովը մեզ հասկացնի, որ իր անումն էլ Յաթօ չի՛:

— Բաս ի՞նչ ա, չը հասկանալ կեղծեց նաշալնիկը:

— Ես ի՞նչ գիտեմ, էն տղէքանցից ո՛րն Արտօ էր կանչում, ո՛րն՝ Արտուշ, մինն՝ Արտուշկա, Արտեմուշկա, մի քանիսն էլ՝ Արտեմ Սերգեյիչ, ոնց որ դու Հիմի, աղա՛յ ջան, հրամանքդ ասում ես. էն օրից դէսը մենք էլ Արտօ ենք կանչում, ընչունքի տեսնում ենք, որ «Յաթօ» ասելիս՝ քինթը վեր ա քաշում, սաքի թէ՛ ինքն էլ Յաթօ ըլնի, մեր գգիր քուրդ Յաթօն է՛լ: Դէ՛, «Յարու թիւն» խօսքն էլ մեր լեզուի լազաբը չի (վայել չէ), տէրտէրի ու վարժապետի բառ ա: Համա իմ քրքրուած հոգին գիտենայ, ես ուրախ կըլնէի՝ մեր քուրդ Յաթօյի հընկերը դառնալ, քան թէ փթած սերգեյի, էդ ի՞նչ խօսք ա Սերգեյիչ: Է՛լի մարդկարմիր պահունի խնձոր, կամ մալաչայ տանձ դառնայ՝ մեղրի պէս քաղցր, որ ուտողի բերանը համ տեսնի, քան թէ տոխպ սերգեյի, որ կախան են անում թէ չէ, մի շաբաթից հոտում, փթում ա ու վէր ա թափում, ոնց որ մեր Յաթօն. վեց ամիս ա՝ քանի տանուտէր ա դառել, ամեն օր հոտում ա մեր վրայ ու մեր խօսքի լազաթը (խորթալը), մեր քաղցր մասլահաթը՝ մեր ուշուկնցը կտրում, մանէթն առնում, շներոց անում: Բաս էդ մեղք չի՞, աղայ ջա՛ն:

— Ախար էլի բան չասացիր, Մէլիք-Բաղա՛լ, կարճ կտրի տեսնենք:

— Դէ՛, էն եմ ասում, որ քեզ յայտնի ա, որ մենք դեղըցի ենք, հընկեր-հարևան ենք, իրար հետ հաշիւ, առնելացուկ, տալացուկ ունինք, պատկից ենք, հող ունինք, բաղ ունինք, բամբակ ու քընջիթ ենք ցանում, ջուր ենք ջրում, աղպէր ենք՝ բաժանուում ենք, ես ի՞նչ գիտեմ, հազար տեսակ կապ ունինք, դէ ո՞նց կըլնի, որ տարէն 12 ամիս սիրով, սոհրաթով ջա՛ն ասենք, ջա՛ն լսենք, ան-

մեղ հրեշտակների պէս միշտ երեխայ մնանք. դէ՛, մեր մէջը խօսք ու զրից կըլնի, տուր ու ծեծ կարող ա պատահիլ, ի՞նչպէս դիմանանք, սրտներինս փուքը ո՞նց նստացնենք, որ ուշունց չի տանք: Ես քո հօրը կը քաշեմ, դու իմ օխտը պորտն Սդամայ դէսը թումբէ թումբ, չօլէ չօլ կը քցես, ես քո կնկայ սիրտը կը շահեմ, գլխի լաշակիցն ընչանք գիւլբէքը կը փառաբանեմ, դու իմ հարս ու քուեր անումը կը տաս, բան ա, աշխարհքն էլ կը կառավարուի, սիրտ ա՛ կը նստի, եօլա կերթայ, ուշունցը հօ էն հրոպպէին տեղ չը հասաւ, ասում ա. դարդակ խօսքը քամին տանի. էդպէս չի՞, աղա՛յ:

— Խեղճ իմ Մելիք-Բաղա՛լ, հիմի տեսնում եմ, որ ծերացել ես, մի ժամ է խօսում ես, միայն իմ ու քո հայրն ու մայրն ես անհանգիստ անում ու բան չես կարողանում հասկացնել. բան ունիս՝ բանդ ասա՛, իմ կնկայ շորերի հետ ի՞նչ բան ունիս, կա՛ց, դնամ իրան ասեմ, էլ մեր տունը ոտ չես կարալ դնել, եասավուլով ու դազաններով մինչև ձեր գիւղը մէկ քշել կը տայ:

— Վա՛յ գլխիս, աղայ ջա՛ն, ես ի՞նչ ճանճ ու մթեղ եմ, որ քո խանութին պակաս խօսք ասեմ կամ չար սրտով աչք քցեմ նրա վրայ. նա իմ քրին ու մէրն ա, իմ բերնի սրբութիւնն ա, ես առակ եմ ասում, օրինակ եմ բերում, ասում ա՛ առակն անխոտելի ա, ես մեր գեղական հաշիւն եմ ասում:

— Հանաք եմ անում, Մելիք-Բաղա՛լ, դու խօսքդ շարունակիր:

— Դէ՛, էլ ի՞նչ գլխացաւանք անեմ, քեզ զուրբա՛ն, մեր հալը հասկացար, էլ ոչ բերաններումս լիզու ա մնացել՝ էս մեր չիք Յաթօյի գլափնութիւնի օրումը՝ ոչ սրտներումս եղ. էլ գեղամիջին մի ձէն, մի աղաղակ, մի հարայ հրոց չես լսիլ, ախար ո՞նց զալմաղալ (աղճա՛կ) անենք, երբ որ մէջն ուշունց չը կայ, չէ՞ որ կռուի աղն ուշունցն ա, պստի հա՛րսն ա շինել մեզ էս անիծածը: Ճարներս հատել ա, մի բան ենք միտք արել. առաւօտը որ զարթնում ենք, դեռ երեսներինս խաշ չը քաշած՝ դռները պինդ փակում ենք, երթիկ ու փանջարայ ծածկում ենք, մի բռն ուշունց, դեռ առաջ մեր խեղճ պառաւների՝ մեր հընկերների (խանա՛ն) գլխին ենք թափում, մի քանի էլ, հախ ու նհախ, վեր հատում, ախար ուշունցը հօ առանց տուր ու թմիոցի եօլա չի գնալ ու յետոյ, մեղքս ի՞նչ

Թագցնեմ, մեր էս աղայ գլափնի տանուտէր սերդէլի Յաթօյի՝ նոյեան տապանիցը բռնած՝ ինչքան արդար ու մեղաւոր ննջեցելք ունի, լցնում ենք մի նեղարեւան շուշի մէջ, ինչքան էլ քաղցր ուշուցներ կայ, մի տեղ ենք հաւաքում, շուշի բերանը խցկում, որ տեղ չունենան դուրս փախելու: Էս որ պրծանք, նոր դռները բաց ենք անում, երեսներս լուանում, գնում ժամ, մի քանի ծունր դնում հանգիստ սրտով ու ժամից դուրս գալիս իրան էդ անիծածին «օղորմի Աստուած», տալիս: Դա էլ իր մէջն ուռչում, փքուում ա, Թէ ինքը նոր օրէնքի գլափնի ա, հին տանուտէրներիցը չի, մեզ ճամփի ա բերել, մեր ուշուցը կտրել ա, մեզ քաղաքավարի ա շինել:

— Էդ լաւ հնարք էք մտածել, Մէլիք-Բադա՛լ, ժպտալով ասաց նաչալնիկը, բայց խեղճ կանանցը դու է հասնում:

— Էլի ուրիշ հնարք ենք դտել, աղայ ջա՛ն. ասենք՝ ես քեզ հետ մի դաւի (վէժ) ունիմ, ես իմն եմ ասում, դու քոնը. երբ որ տեսնում ենք, որ եօլա չը գնացինք, սրտներս չը նստեց, առանց ուշուցի վերջանալու չի, ես կացինն եմ վերցնում, գնում մեր բաղը, դու բահն ես առնում, էրթում դպա ձեր ջաղացի առուի ուռի ծառերը. գնում կանգնում ենք, հոգոց քաշելով՝ ամենքս մի ծառի տակ: Ես ասում եմ. ա՛յ ծառ, քո անումդ Գրիգոր ա. դու էլ, ի հարկէ, ասում կըլնիս՝ Բադալ ա. յետոյ սկսում ենք՝ ես կացնով՝ դու բահով՝ ծառին շրկակացնում, Թրխկացնում ու հետն էլ ուշուցի տապալկը դարդակում: Էն տեղ էլ նոյը մօտիկ ա, Ադա-միցն ենք սկսում, ընչանք Ուռնալի կալը գնում, կենդանի ու մեռել իրար խառնում ու «օխա՛յ» անելով, գալիս մի կուշտ ու կուռ հալալ հաց ուտում:

— Բայց մի՛ մոռանար, Մէլիք-Բադա՛լ, որ ժամից աւելի է խօսում ես, կնոջս պատուեցիր՝ հերիք չէր, մեռել կենդանս էլ անհանգիստ արիւր է էլի խնդիրդ չ'ասացիր:

— Աղաչանքս էն ա, ոտներիդ մեռնե՛մ, որ դու մեր դատաւորն ես, մեր ցաւերի դեղ ու դիր անողն ես, առաջ մեր էս դարդն իմանաս, սրտներիցս հարցնես, յետոյ յետ դառնաս երեսիս Թքես, Թէ Բադա՛լ, ձեռ մեկնի՛ր, աշխատի՛, ուսումնարան բաց արա՛, որ երեխէքը կարդան: Ես կարդալու հախառակ չեմ, աղայ ջա՛ն, համա սրտումս եղ չի մնացել: Եթէ գիտես, որ իմ ձեռիցը բան կը գայ,

Թէ ուզում ես, որ ես գործի մէջ խառնուիմ, գամ քո ոտներն ընկնեմ, ուրիշին շլինք ծռեմ, ողորմութիւն ուզեմ, իմ հարեան բարեկամին սիրտ տամ, ուսումնարան բաց անենք՝ դու էլ հրաման տուր էս լէն ու բօլ տեղումը, էս քչքչան գետի ափին, էս սիրտը խորոված հասարակութիւնի առաջին՝ լիզուիս կապերը քանդեմ, ո՛ւմ սիրտս ուզում ա, մի սրտալի, կուշտ ու կուռ ուշունց տամ, ջանս ու հոգիս դնջացնեմ, յետո՛յ՝ ինչ որ հրամայես, պատրաստ եմ գլխիս վրայ կատարելու, Թէ մի օրուայ մէջն ուսումնարանը դուրս չեկաւ՝ կաշիս քերթել տուր եասավուկ սարի արջ Մահմատին:

Ուրեմն եթէ քեզ իրաւունք տամ ուզած մարդիդ հայհոյել, դպրոց բաց անո՞ւմ ես մի ամսի մէջ, հարցրեց նաշալնիկը:

— Զը խաբուիս, Մէլիք-Բադա՛լ, մէջ մտաւ ծիծաղելով տանուտէր Արտեմ Սէրգէյիչը, նաշալնիկը քեզ փորձում է, էդ նաշալնիկի իրաւաւունքը չի, էդ տանուտէրի վերաբերեալ գործ է, մեղք ես, պարտքի տակ չը մոնիս, ես էս գլխից նաշալնիկի ներկայութեամբ՝ քեզ ասում եմ, որ ամեն մի ուշունցը՝ մի մանէթ տուգանք ունի:

— Դէ՛, ձէնդ քեզ քաշի, չօլումը քամի անո՛ղ, դու էլ շա՛տ ես հպարտացել, չես հասկանում, Թէ ո՞ւմ առաջին ես խօսում. կրակի առաջին չախմախի չեն տալ, ասում ա. «յերեւել արեգակ՝ կորնչեն աստեղք»... մեր գլխի տէրը, մեր աղէն էստեղ՝ դու ի՞նչ կը համարձակիս ծպտուն հանել, Թող մի ողորմի, հրաման տայ, տես իմ բերանիցն ի՞նչ դուս կը Թափի, ո՞ւմ գլխովը վէր կը գայ, էդ յետոյ մենք կը տեսնենք՝ Թէ դու իմ մի հատ կապէկին ո՞նց ես դիպչում:

— Իրաւունք եմ տալիս, բարձրաձայն վճռեց նաշալնիկը:

— Աո՛րթ, գլխիդ մեռնեմ:

— Էս բոլոր հասարակութիւնը Թող վկայ լինի, եթէ տանուտէր Արտեմ Սէրգէյիչը քո մի կոպէկին դիպչի, հնգապատիկ վճարեմ:

Էլ ես չեմ խօսում, էլ իմ գրիչն այն շնորհքը չունի, որ Մէլիք-Բադալի բերանից յորդաբուղիս աղբրի նման դուրս Թափուածները մի առ մի Թղթի երեսն առնի. դուք՝ եթէ ցանկանում էք, գտէք իրեն՝ տանուտէր Արտեմ Սէրգէյիչին և Թող ինքն իւր այրուած սրտով իւր դարդերը ձեզ լայ ու պատմի: Մեզանից ոչ մէկը, համոզուած եմ, իւր կենաց շրջանում այնքան բազմակողմանի և բազմատեսակ հայհոյանքներ լսած չունի. երեւակայել անհնար է, Թէ

մեր Մելիք-Բաղալը՝ երեսը տանուտերին դարձրած՝ ի՛նչ խօսքեր դուրս թափեց իւր բերանից խեղճ Արտեմ Սէրգէյիչի հասցէին: Նսքառորդ՝ դուք կէս ժամ ասացէք, շարունակ մի մի ծանր ծանր արտասանած հայհոյական խօսքի հետ՝ ձեռագը շարժումով էլ տեղն էր յատկացնում:

Ամենքը ծիծաղից թուլացել են, ինքը նաչալնիկը մատը կտրես՝ չի՛ իմանալ, յետ է փռուել բարձերի վերայ ու փոր ու սիրտ բռնած կշկռում:

Մելիք-Բաղալն իր խօսքին տէր էր, մի ամսի մէջ զպրօցը դուրս բերեց. նոյն օրը նաչալնիկից ու նորա հետի աստիճանաւորներից ու ծառայակիցներից 500 մանէթի չափ նուէրք առաւ: Իսկ ի ցաւ Օ. գիւղի բոլոր հասարակութեան և նոյն իսկ իրա՝ Մելիք-Բաղալի, Արտեմ Սէրգէյիչի տանուտերութիւնը շատ կարճատև եղաւ. մի ազդեցիկ մարդու գործ դրած մեքենաները նրա հրաժարականը շտապեցրին:

Այդ մասին Մելիք-Բաղալը մինչև էս օր էլ ակն է քաշում:



#### Տ Ղ Ա Մ Ա Ր Դ Ի Հ Ո Գ Ի Ն.

Բարեւից աշնան ամենառատ ժամանակն է: Օ. գիւղի բոլոր այգիներն ամենաքաղցր պահունի պտուղներով լցուած են. խնձորի, տանձի, սերգէլի, դեղձի ծառերը՝ որ դարունքը գժատուտ պատանու նման գլխները ցցել, երկնքի հետ էին կռիւ տալիս, որ դոյն զգոյն անուշաբոյր ծաղիկներով փթթած՝ կարծես ամենքին իրենց գլուխն էին ցոյց տալիս, այսօր այդ բոլոր ծառերը բռնաշալակ մշակի նման կռացել, փոքր է մնում գետնին կպչեն: Եթէ տասնաւոր նեցուկները չը լինէին, որոց վերայ զառամեալ ալւորի նման յնուել են մեր ծառերը, հիմի ամենքն էլ վաղուց ճղքնակոտոր կը լինէին: Այգիների միջնալայրերն էլ միաբանուել են ավների ծառատնկի հետ, խաղողի որթերը կախ են արել իւրեանց հաստ ու կոխուն ողկոյցները և իւրեանց տասնաւոր գոյներովը նմանում են ճիշդ զոհարազարդ ոսկի անօթի: Մարգարիտ կոչես սպիտակ Քիշմիշի ասուած խաղողին, շողալին անուանես թափանցիկ շողշողուն Ասկեարուն, զմրճւթ ասես մեծապտուղ ծիրանագոյն Հալաղուն, յակինթի՝ նմա-

նացնես եղան աչքի խոշորութիւնն ունեցող Եզնաչքին, դեղին ու սև սաթի՞ հետ համեմատես սև ու սպիտակ՝ արևից դեղնած Խարջուին կամ Կանաչկենուն. ո՞ր մէկը համարես, զոհարների տեսակները չեն կարող մրցել Սրարատեան դաշտի խաղողների տեսակների հետ. հետաքրքրուողներն ասում են՝ մինչև 54-ի են հասել, ես կասեմ՝ էլի՛ լրիւ չէ:

Ուրախ է գիւղացին, նա երջանիկ է, նա այսօր ժողովում է Աստուծոյ տուած բարիքը, օրականը ծախում է լեռնացի բեռնաւորներին, որոնք մըջիւնի կարաւանների նման քթոցները ձիանցը բարձած՝ խռնուում են այգեշատ գիւղերումը, իսկ պահունին զգուշութեամբ կրում է իւր մառանը և ձկուն ուռենու բարակ ճղնիկների վերայ կախան անում, մառանի առաստաղը զարդարում՝ իւր սիրուն փոքրիկների ձմեռուան պաշար պատրաստում:

Գիւղական կեանքն եռում է. ամենածեր պապերից և ատամնազուրկ պառաւ տատերից բռնած՝ մինչև նոր ոտնաւորուած Թոթովախօս մանուկը՝ ամենքն էլ գործում են. մինն ուռ է քաղում, միւսը կախանում է, երրորդը բեռն է բարձում, չորրորդը քթոցը ոտքի տակին կախ է տալիս, կանաչք դեղձ են կլպում, աղջիկներն ալանի են շինում, երեխայքը չորացածներն են հաւաքում տնադորժ տափարակ ուռեայ մատուցարանների—սալաների մէջ, ա՛յս են անում, ա՛յն են անում, ես ի՛նչ գիտեմ՝ ի՛նչ են անում, բայց որ ամենքն էլ բանի են, ամենքն էլ շտապում են ծառապտողից պրծնել, որ կպչեն այգեկութին՝ ամենայն երջանկութեանց զազաթնակէտին:

Աստուծոյ աչքն այս տարի քաղցր է նայել գիւղացոնց վերայ, Թրթուռ, մարախ, խորշակ, կարկուտ, ժանգ, փոթորկալից քամի, զարնանային յորդահոս հեղեղներ ու տարափներ, ո՛չինչ երկնային ցասում գիւղի գլխովը չի անցկացել, ոչ մի ծաղիկ ունայն տեղը գետին չի ընկել, ամեն կոկոմած բացուել, բեղմնաւորուել և պտուղ է դառել:

Ուրախ են առաւելապէս այս տարի նշանուելու կտրիճ պատանիքն ու արբունքի հասած հրեշտականման աղջիկները. ցնծում են նրանք և հաստատ յոյս ունին, որ իրանցից ոչ մինն այս ձմեռ չի մնալ առանց բարձակից ընկերի, ամենքն էլ արժանի կը լինին կանաչ ու կարմիր նարօտին՝ սուրբ պսակին:

Ամբարն ալիւրով լիքը, կարասները գինւով փորերը տկզած, մնռանը հազարաւոր բարիքներով փքուած, իւղն ու պանիրը կճուճ բժուլթից դուրս են թափում, էլ ծակ փորով աման չի մնացել. վերի ալվանումը մինչև առաստաղը բամբակի կորզոյն է կիտում, չանաքաւոր է կանչում, կտաւատը ձիթահանքումն է ճմլվում, ձէթ դառնում, քնջիթը բովում է դայինխանումը և մի քանի օրից արդար իւղից չը զանազանուող շիրբախտի ձէթը պէտք է տկերը լցուն ու թիֆլիզ զրկուն. ուրեմն էլ ջահէլներին բաղդաւորելու ի՞նչ արգելք կայ:

Իսկ եթէ ամեն նորահարսներ ապագայի յուսով են խնդում՝ դեռ իւրեանց մէջ վիճակ չը ձգած՝ թէ ճակատագիրը ո՞ր խումար աչքերը պտի իրան հանդիպեցնի, ընչի՞ չը պէտք է ցնծայ ու ճխայ մեր Սամիսոնը, որ իր պատկից հարեանենց աղջիկ Սօնան ոտը 16-ի մէջն է դրել ու այս ձմեռ իւր կողքը պէտք է տաքացնի:

Էլ այսուհետև ումի՞նչ կասկած ունի Սամիսոնը. Ասօն խաչեղբայր դառնալ խոստացաւ, իշխաններն ու շարթեցեցան կամ դեռ խումփում, մրափում են յիմարութեան մէջ, իր դժուարութիւնները վերացել են, ամենից մեծ արգելքներն իւր և Սօնայի ծնողներն էին, որ երկու շաբաթ յառաջ իրենց մէջ համաձայնութիւն են կայացրել, մի մի բաժակ գինւով խօսք են տուել, խօսք առել գիւղական պարզ և համեղ սեղանի վերայ՝ այգու ափումը, տերեւաշատ ծառերի հովումը: Մնացել է միայն ձևականութիւնը, որ այգեբանը և դաշտային գործերը վերջացնելուց յետոյ՝ մի օր յայտնեն իրանց զաւակների նշանը և մի երկու շաբաթից՝ հարսանիքի հոգար քաշեն:

Երկուսինս էլ մինուճարներ են, մի մին ծառի շիւ են, թո՛ղ իրար փաթաթուին, ճղքճղքնոտին, մեծանան, ծաղկին, պտուղ տան, որ ծերութեան մէջ մեզ մխիթարեն, առաջարկեց զասաբ Գալ — ափուն. լաւ չեմ ասո՞ւմ, հարեան ջա՛ն:

— Քրիստոսի բերնոյն ես խօսում, ես իմ Աստուածը, Գալօ ջա՛ն, իմ կողմանէ էս օրուանից Աստուած շնհա՛ւոր անի, վճռեց Ալէքենց Բարսեղը, հալբա՛թ, Աստու մի մատը կար էս բանի մէջ, մեր խնամոնց աղջիկը (կնիւ) ասում էր, որ երկու երեք տարի ա, մեր երեխէքն իրար սիրել են:

— Շա՛տ էլ լաւ են արել, դուշմանի (Լէշուհա) աչքն էլ են

Հանել, տօ՛, պապենական մենք բաղի հարևան էլ ենք, տան դրկիցներ էլ, մեր հէրերն իրար հետ են նստել, վեր կացել, մենք մանկուց իրար հետ ենք տռճնգի տուել էս բաղերի կանանչ ավիներումը, մեր կնանիքն են մին մինի հետ փսփսացել, հացփոխ արել, մեր երեխէքն են պստկուց անփոխան, փորը բաց էս առունների ցիւերի միջին քաշ եկել, իրար հետ կլպլտալով «տա փ կենալ ու կի» խաղացել, երբ որ էլ մենծացել են, իրար հասկացել՝ «էն էլ դո՛ւ ասա։ Ել ես քեզանից ո՞ր լաւի դուռը պտի ծեծէի, աղջիկ ուզէի, կամ դու իմ ընչի՞նչ չը պէտք է հաւանէիր, որ երես թեքէիր, չը տայիր։

— Կամ ընչի՞ պէտք է մեր սէրն ու աղպէրութիւնն աւելի չը պնդացնենք, Գալօ ջա՛ն։

— Մեր ջուխտ մինուճարների արեւներովն եմ երդուում, Բարսեղ ջա՛ն, որ մեր երեխէքը մեզանից խելօք են էլել, իրանց գործն էն գլխիցն են տեսել։

— Տօ՛, բա՛ նոր ես գլխի ընկնում, որ էս օրուան մի մատր քօրփէն տասն իմ ու քո խելքն ունի՞, էս օրուայ օխտը տարեկանը շատ ա հասկանում, քան թէ մեր ժամանակի 20 տարեկանը. մեր ջահէլ վախտը դու աղջիկ տղի իրար սիրել, խօսք տալ՝ լսել ե՛ս, որ մեր սատանի ձաղերն էս հասակումն երկու—երեք տարի, մէրն ասում էր, իրար խօսք են տուել։

— Ես էլ, Գալօ ջա՛ն, իմ պառաւիցն (կո՛ւշից) իմացայ, թէ էէ հինգ տարի մնար, ես բան չէի հասկանալ, ախա՛ր, տղամարդի խելքն էղպէս բանին կը հասնի՞։

— Մենք տղամարդիքս ի՞նչ ենք որ, Բարսեղ ջան, սկսեց փիլիսոփայութիւն անել Գալ—ափուն, մենք Աստծու պարզ միամիտ աղպէրներն ենք ու մեր կնանոնց ձեռի աղլխները։ Անումն էն ա, սաքի, որ տան գլուխը մենք ենք. շատ սուտ ա, դարդակ, սիրտ հովացնելու խօսք ա, տղամարդը կնիկարմատի անհախ—անվարձ ծառան ա ու նրա սրտի ցանկութիւնների կատարողը. կնիկն էլ որ կայ՝ տղամարդի հոգին ա։ Ինչ ուզում ես՝ մտքումդ դի՛ր—տունդ ո՞նց կառավարես, գործդ ի՞նչպէս տանիս, ի՞նչ բան բռնես, ե՛րբ դարիբուլութիւնի՝ քրիհ—քարվանի գնաս, որդուդ ե՛րբ պսակես, ո՛ւմ աղջիկն ուզես, ո՞նց նստես, վեր կենաս, ես ի՞նչ գիտեմ, ամեն բան ու գործիդ՝ տնային կառավարութիւնիդ մէջ ընչանք կնկանդ մատը խառը չըլնի, մինչև նրա սրտովը չըլնի, գլուխ չի գալ։

— Սուտ չես ասում, Գալ — ափո՛ւ։

— Ո՞նց թէ սուտ, խօսքերս Աւետարանի կողքումն են գրուած, փորձի՛ ու տե՛ս։ Մէկ էլ, ասենք, մտքումդ դրիր մի ձի առնես, քո բերքն ու մասիլը բարձես վրէն, տանես քո ձեռքովը սաղացնես, օգուտը ուրիշին չուտացնես։ Կնիկդ միտք չունի, քէֆումը չի գոմումը ձի տեսնել։ Մէկ էլ զիշերը պառկել ես, ողջ օրն եղի պէս բանել, չարչարուել ես, վէր ես ընկել, ոտներդ ձգել, որ մի քիչ հանգատանաս, էգուց զիշերահանց աքլորականչին վեր կենաս մութէ-մութ գնաս քո աշխատանքին։ Մէկ էլ տեսար, խանութդ եկաւ, կողքդ մտաւ, պառկեց. դէ՛, քո կողակիցն ա, Աստծու տուած հէնկերն ա, քո թուլակողքն ա, հօ ջոկ տեղաշոր չը պտի՞ քցի իր համար, էդ Աստուած էլ կը բարկանայ, հայ-քրիստոնէի հաւատին էլ հակառակ ա, դէ՛, էն օրից որ կանանչ-կարմիր բարակ ապրշումէ պարանն երկուսիդ շինքովը պատ տուին խաչ ու Աւետարանի տակին, ձեռ ձեռի տուին, միացրին, կնիկը քո մեղքն ա, քո շինքի կապն ա, քո կողքը չը մտած՝ դռան տակին, օխտը ճամնիի միջին հօ չը պտի՞ վէր ընկնի, Աստծու պատուէրը հօ քանդուիլ չը պտի՞։

— Հը՛մմ...

— Հա՛, մէկ էլ տեսնում ես՝ եկաւ։ Ուրիշ վախտ ուզում ես հետը քաղցր զրիցներ անիլ, քո տան խէր ու շառի վրայ խօսիլ, երեսը շուռ ա տալիս, տնքում, ճրրում, վռչում, թէ հիւանդ եմ, թող՝ քնեմ։ Դու էլ՝ դունչդ բարին ա դիպչում, քեզ համար տաք ես անում, վէր ընկնում։ Իսկ էս օր, որ մտքումը դրել ա շեմքովը ձի տուն չը թողայ, տեսնում ես՝ քաղցր մասլահաթների տոպրակը բաց արեց. — ա՛ մարդ, քեզ մատա՛ղ, սրտումն դարդ ա մնացել, չը զիտեմ, էս օրուայ տօլմէն հաւանեցի՞ր, թէ ոչ, աղը հօ շատ չէ՛ր, լղար հօ չէ՛ր, քո ազիդ արևով եմ օրթում ուտում՝ երեսի ողջ եղը քաշեցի, քեզ զրկեցի հանդը, քօռանա՛մ ես, քաջա՛ն, վա՛ց թէ սառել էր, համ չը տեսար, գնդերը բկումն շարուեցին, կուլ չը գնացին, ոնց էլաւ՝ երկու հատ բերանս դրի ու ոնց որ դու հանդիցը մատդ վրէն չը դրիր, ես էլ էնպէս. ախա՛ր ի՞նչ կուլ կերթայ, առանց քեզ հալալ հաց կուտուի՞, հլա բօյիդ մեռնե՛մ, ա՛յ քա, տօլմէն լաւն էր, թէ ոչ։

— Մի կնիկ, շա՛տ լաւն էր, լաւ էլ իշտահով կերայ, դէ՛ հերիք ա, քունս տանում ա, աչքերս դնում են, էս օր էնքան դութանի

մածի հետ թրև եմ եկել՝ մէջքիս իլիկը կոտորուում ա, թո՛ղ քնեմ մի քիչ, որ էն գլխէն ջուրը մերն ա, պտի դնամ բամբակի վերայ կապեմ, կիսաչոր ա էլել:

— Դէ լաւ, կը գնաս, ասում ա ու խուռնջիկ-մուռնջիկները (շողո-  
տորեալներ) սկսում կամ թէ չէ՝ թնգլթնգում, տնքտնքում, լաց  
ըլում, թէ իրան շան տեղ չես քցում: Ի՞նչ անես, Բարսեղ ջա՛ն,  
թաղա խնամի՛, դու էլ հօ քար չես, քնատիրոնջ հէ՛րն եմ օրհնել,  
կողքս տաքացնողի սիրտը պակասցնեմ, թէ հանգստանալու ե՛մ:

— Է՛...է՛...է՛... Գալօ ջա՛ն, ըսկի եղ ըլելու բան ա՛, հանգստա-  
նալ ես ուզում, հանգիստը գերեզմաններն են՝ որ կան:

— Ենպէս չի՞, Բարսեղ ջա՛ն, ճակատներիս գրածն երբ որ լրա-  
նայ, կերթանք կը պառկենք միջքի վերայ, էնքան կը հանգստա-  
նանք, որ Գաբրել հրեշտակը կը գայ, կողքներիս իր գուռնովը կը  
բզի, Ուռնայի կալը ցոյց կը տայ:

— Իրանից փախչիլ չենք կարող, դու բա՛նդ ասա:

— Շուռ ես գալիս, աղպէ՛ր, սկսում ես կտուց կտըցի տուած՝  
քչփշալ, մի քիչ դէ՛սից, մի քիչ դէ՛նից, ինքդ չես հասկանում, թէ  
ո՛նց կնիկդ խօսքը փոխեց, բերեց ձիու վրայ, ո՛նց դժուարութիւն-  
ներն ու ձիու տուած ֆնասները մի մին գերանի չափ աչքիդ առա-  
ջին շարեց, ո՛նց քո խելքումն էլ նստացրեց, քեզ համոզեց, բերա-  
նիցդ խօսք առաւ, որ մեր գոմի մսուրքը ձի չի տեսնիլ: Հէնց էս-  
պէս էլ ամեն բանի մէջ: Լաւ իմացած կաց, մինչև կնիկդ չը ցան-  
կանայ, Աստծու արևի շողքն էլ տանդ միջին չի կարող պտիտ գալ:

— Դէ դու ասեցիր, թէ կնիկը չտղամարդի հոգին ա, էլ ո՛ւր ես  
երկարացնում, Գալօ ջա՛ն, ախար դու հէնց գիտես, իմ մտքովն  
անց ա կացել քո տղին աղջիկ տալը, դո՛ւ ոչ մեռնիս, ամեն օր  
Սամփտնդ, Աստուած քեզ բաշխի, աչքիս առաջին ա, փառք Աս-  
տրծու՝ հասած, կատարած, բեղերն եկած տղամարդ ա, ես էլ ազափ  
աղջկայ տէր եմ, երեք տարի ա իմ աղջկայ ուզողները դու-  
ռա ջարդում են՝ չեմ տալիս, դռնովն եմ դուռ անում, երթկովն են  
մտնում: Ես էլ չեմ տալիս, թէ դեռ ջահէլ ա: Ո՛րտեղի ջահէլն ա,  
դու հիմիկուայ ծէսերը զիտես ո՛չ, որ 13 տարեկան աղջիկ չեն թո-  
ղում տանը մնայ, համա մերը մի հաս էր, տղէն ու աղջիկը գլխը-  
ներս կոխել հօ չի՞, որ շտապենք ռադ անել, դէ մէրն էլ խեղճ ա,

Հարսը չ'ունի, ունենալու էլ դուռը չը կայ՝ որ դայ իրա մատիցը փուշ հանի. չէինք վռազում, բաց տունա, առանց խօսալ չի ընիլ, մեր միջումը սրա-նրա տղի վրայ վիճակ էինք քցում, մէկին հաւանում, մէկէլին փնտովում (դիւտաւում), համա բո տղի անուամբ ընչանք օրս մտքովս չի անցկացել, մեր Քէյվանին էլ բան չէր ասել: Ինչ կանես՝ չը գիտեմ, մէջտեղն ընչե՞ր անցկացաւ, ո՞ր տեղից խանութիս գլխումը պտիտ եկաւ, էս երկու շաբաթ ա էդ կնիկը տամարս ա մտել, սատանայ ա դառել, ինձ հանգիստ չի տալիս. — ա՛յ մարդ, Սամփսոնը լաւ տղայ ա, էս օր Սամփսոնը մի բեռն եղ ու պանիր ձիուն բարձած՝ ինքն էլ քիբարի (կոկ) միջին նստած՝ տուն բերեց, Սամփսոնն էս դեղի տղէքանց աչքն ա, Սամփսոնը հօրն ու մօրը հնազանդ ա, Սամփսոնն է՛ս ա, է՛ն ա, վերջը, վերջը, վերջը՝ Սամփսոնը լաւ փեսացու ա, Սամփսոնին աչքիս լսի պէս սիրում եմ, Սամփսոնը մեր աղջկանը սիրել ա, մեր աղջիկն էլ Սամփսոնին ա սիրել, ես իմ երեխին Սամփսոնիցը հանիլ չեմ, դու էլ պտի կամք տաա: Ես էլ տեսայ, որ խաթունիս ձեռիցը չը կարացի աղատուիլ, ոչ տարայ, ոչ բերի՝ ասեցի. — իմ կողմից Աստուած շնորհաւոր անի:

— Դէ տեսա՞ր, Բարսեղ ջա՛ն, որ կնիկը տղամարդի հոգին ա:



### Հ Ն Ձ Ա Ն Ա Բ Ա Դ.

Մի արեկող այգու հարաւային անկիւնումս այսօր էլ դեռ երեսը դէմ տուած՝ կանգնած է Հնձանաբազը: Այդ մի աւերակ է, որի դազաչափ երկայնութեամբ քառանկիւնի կոիածոց քարերի երեսները ժամանակի մաշող զօրութիւնից տեղ տեղ խորդուբորդուել են: Հնագէտը նորան առ սակաւն 700—800 տարիներ կ'ընծայի: Ո՛չ տաճարի է նմանում այս աւերակը, ո՛չ մի հնադարեան իշխանական պալատի և ո՛չ մեր աշխարհքում մեծ անցքերի և ճանապարհների վերայ շինուած քար վանսարայ կոչուած իջևանատեղերի: Ոչ մի յիշատակարան կամ արձանագրութիւն ենթադրութեան տեղիք չի տալիս. միայն Հնձանաբազ անունն է, որ փարատում է ամենայն տարակուսանք. այդպէս կոչուում են Արարատեան աշխարհի այգեշատ գիւղերի այգիների մէջ տեղ տեղ մնացած հին հնձանների ա-

ւերակները. անունն ինքը ցոյց է տալիս, որ դոքա բոլորը Հնձանատեղիներ են եղել, ուր տրորուել են ու մզուել մեր պապերի ձեռքով տնկած ու հասցրած խաղողները՝ նոյ մեծ պապից սկսած՝ մինչև մեր օրերը:

Հնձանաբազը դրսից ոչինչ չի ներկայացնում. այգետէրերը, երևում է, թափուած քարերը ժողովել են ու թափել ներսը գաւթի մէջ. այդպէս էլ է, բազումը քարի կոյտերից աւելի ոչինչ չը կայ, խոտն էլ՝ այգու անբաժան ընկերը, տեղ չի գտել, որ դուրս գայ. տեղ տեղ միայն աներեսի պէս գլխները դուրս են հանել քարածերակերից եղինջի թփերը, որոնք մարդաչափ բարձրանում են և աշունը չորանում:

Զը զարմանաք, եթէ ասեմ, որ Հնձանաբազը դարերով ո՛չ միայն աղամորդու ոտք չի մտել, արևն ու անձրևն էլ դժուար են թափանցել: Հինաւուրց հաստաբուն թեղի ծառի խիտ և անխնամ թողած ոստերն են հովանաւորել ամբողջ աւերակի վերայ, ծառը բարձրացել է և նորից վրանանման կռացրել իւր ճղքները և մինչև գետինը փռուել. էլ ո՛ւմ ցաւն էր կտրուել, աչք ու երես ծուատել և մի դատարկ հետաքրքրութիւնից ներս սողալ Հնձանաբազը:

Թեղու փշանման բարակ ոստերի ծայրերը չէին միայն որ Օ. գիւղացիների ոտքը կտրել էր Հնձանաբազիցը. երկու արգելք կար և երկունս էլ օրինաւոր. առաջինն այն էր, որ թեղուն դիպչելը մեղք էր համարուած. թեղին Թուխ-մանուկի տնկածն էր. գիւղի երեխան էլ գիտէր, որ թեղու ոչ մի ճղքին դանակ, էտոց, կացին չը պէտք է դիպչէր, ապա թէ ոչ՝ արիւն դուրս կը գար. թեղին հէնց ինքը Թուխ-մանուկն ա, բարակ ոստերը Թուխ-մանուկի երակներն են, իսկ տերեւները՝ նորա զգգողած մաղերն են:

Թուխ-մանուկը մերձակայ պարսկական գիւղի մօլլի որդին էր, նա քրիստոնեայ է դառել, նորա մօլեռանդ հայրը կամեցել է որդուն սպանել, հալածելով հասցրել է մինչև Օ. գիւղի Հնձանաբազը: Մանուկը տեսնում է, որ հայրը հասուէհաս է, խնդրել է Աստուծոն, որ իրան ծառ շինի, հօր ձեռքից ազատի: Խնդիրքը կատարուել է. մանուկի զգգողած մաղերը ճղքներ են դարձել և մօլլի մտնելուն արգելք եղել: Կառաղած մօլլէն այնու ամենայնիւ մի փոքր իւր փափագին հասել է, թրով տուել է ծառի մի ճիւղքը քերցել: Այսօր էլ

կը տեսնես քերցուած տեղում չորացած ու սկացած արիւնը:

Երկրորդ աւանդութիւնը Հնձանաբազը շինում է օձերի թագաւորի պալատը. թափուած քարերի խողովներն են թագաւոր-օձի ապարանքները, այնտեղ են նորա զօրքերը, այնտեղից է օձի թագաւորն իւր ամբողջ բանակով՝ հազարաւոր օձերով կռիւ գնում Մասիսի ձորաթմբերում, կամ Սրագածի կրճքի ճղուածքում՝ Ամբերդայ անդընդախոր ձորի մէջ զտնուած թագաւոր-օձերի վերայ:

Հնձանաբազի օձի օջաղի դուռը փոքր ինչ հեռու գտնուած քարակոյտերի տակին <sup>1)</sup> է: Շատերը տեսել են բռնաչափ բազմանկիւնի ադամանդը, այն հուլը, որ օձի թագաւորը բերանումն է պահում ու արեւկող արած ժամանակ հանում, բազմացնում իւր չորս պողերի մէջտեղը, թագի տեղ գործ ածում: Այն անում է, որ գոհարի շողշողիւնը խտողեցնի մտիկ տուողների աչքերը, որ չը գան իր խաղաղութիւնը խռովեն. ժամանակ ժամանակ թագաւոր-օձն ինքն էլ սիրում է զուարճանալ իւր անդին գանձով. նա յուլիսի կրակ թափող շոքերին՝ ճիշդ կէսօրին՝ երբեմնապէս դուրս է գալիս իւր նաղիր-վէզիրներով, իւր անհամար զօրքերով ու գալարուում, կուտապ կուտապ գալիս օջաղի ծակի առաջին, հանում է բերանից շողակը և ժամերով վերև շարտում՝ բերանով բռնում, քցում՝ կալնում:

Հէնց էս խառնիխուռն պատմութիւններն են, որ Հնձանաբազի ներսն անմատչելի են արել նոյն իսկ այգու տէրերին:

Դեռ էլի նոր առասպելներ կարող էին հնարուիլ վերջին երկու տարիների մէջ, եթէ դիւրահաւան պառաւններից մէկին, կամ միւսին հանդիպէր լսել Հնձանաբազի ներսի յաճախակի փսփսոցները, կամ տեսնէին՝ ինչ որ մենք պիտի տեսնենք:

Անկարծի՛ք, շատ ապահով են եղել երկու հոգի, որ իւրեանց խորհրդատեղին ընտրել են Հնձանաբազը:

Եւ արդարեւ, ոչ Ալէքսնց Բարսեղն իւր կնոջով և ոչ հանրահռչակ Գալ—ափուն մի օրից մի օր մտքներովը չ'անցկացրին, թէ

<sup>1)</sup> Ծանօթ. Ալուպիսի օձաբներ ալսօր շատ զիւղում կան, 100աւոր մի կանգնաչափ օձեր միմեանց գլխի թափուած՝ հաւաքուում են բնի, կամ օջաղի առաջին և ժամերով վալելում արևի տաքութիւնը: Օջաղի օձերը ոչ իւրեանց բնի առաջից կը հեռանան և ոչ կը կծեն:

ընչի՞նչ իրանց միևնույնները ժամերով անյայտանում են իրենց այգիների խոր թմբերումը:

Կասկած տանելու տեղիք էլ չը կար. Սամվատնը մանդաղը ձեռքին՝ թմբերի՝ միջումն էր; ուրեմն աշնան հունձն էր անում, խոտ էր հնձում. իսկ Սոնան զեղձի ծառերի տակերն է ժողովում, տանում իւրեանց և հարեան Գալ—ափունենց լայն միջնապատի քարերի վերայ շարում, չորացնում: Բանն այն է, որ ոչ թմբերի խոտն է հնձելով վերջանում, ոչ զեղձն է պրծնում, ոչ էլ մեր քահանայներն են թմբերիցը դուրս գալիս:

— Ը՛ս..... ը՛ս..... ը՛ս.....

— Ը՛ս..... ը՛ս..... ը՛ս.....

Առաջին շուկը լսուում է Հնձանաբազի գրսեկից, երկրորդը՝ արձագանգ է տալիս ներսից:

Եւ ահա մի բարձրահասակ սևաչեայ աղջիկ, առնելով իւր խուլ սուլոցի արձագանգը, չորս կողմը զգուշաբար աչքը պտտեց և ներս առաջ Հնձանաբազը:

— Մեռայ սպասելով, աչքս ջուր կտրեց:

— Չէր կարելի, մէրս հազար բանի ա դնում:

— Նստի՛, ոչի՛նչ:

Աղջիկը նստեց կոկ շարաքարերից մէկի վերայ:

Նորա կողքին՝ բաւականին հեռու, տեղաւորուեց խօսակիցը:

— Քի՛չ էլ հեռու, մի՛նթանէս (չըջաղէ՞ս) կը տրորես, մէրս կիմանայ, լաւ չի՛:

— Ել ո՛նց հեռու, քարի պոնդին եմ, քիչ ա մնում՝ վեր ընկնիմ, երկուսիս մէջտեղն երկու մարդի տեղ կայ:

— Լա՛ւ:

Խօսակիցը մի խոր հոգոց քաշեց և մուրացկանի պէս վիզը ծռած՝ աջ ձեռքը պարզեց:

Օրիորդը հանդարտութեամբ նորան երկարացրեց իւր կողմից ձեռքը:

Առաւ անձանօթն իւր կոշոռցած մատների մէջ օրիորդական քնքուշիկ մատների ծալքերն և հեռուից շարունակ շփում էր:

Այս գործողութիւնը կատարուում էր ժամերով լռիկ-մնջիկ:

Բնութեան հանդարտ ժամանակը, այն էլ միայն զիշերը, երբ ամեն շնչաւոր մրափած են և օդն ամենանուրբ է, ամենասոււր ա-  
կանջը շատ մօտից հազիւ կարող է որոշել երկու անընդհատ միա-  
պաղաղ շնչառութեան ելեւէջներ: Ուրիշ ոչինչ ձայն չէր խանգարում  
Հնձանաբազի խաղաղութիւնը:

— Էերի՛ք է, հօտ չառնեն, աշխարհքի մէջ մի մատը մեղր չը  
դառնանք:

Պատասխանը երկու ուսերի վեր բարձրանալն է, որ ժողովրդի  
մէջ ակամայ համաձայնութեան արտայայտիչ է, այսինքն՝ թո՛ղ քո  
ասածը լինի:

Տեղերումը շարունակում են պինդ նստել:

Անցնում է էլի՛ կէս ժամ, աւել, պակաս:

Մի նոր շարժում՝ զլիսով դէպի այգու ափը ցոյց տալով՝ աղջկայ  
կողմից:

Յօժարակամ համաձայնութեան նշան՝ գլուխը դէպի աջ ուսը  
թեքելով:

Աղջկայ բարակ մեղրամոմանման մատները պինդ սեղմուեցան  
ընկերի փայտեայ կոշտ մատների մէջ, մի մի խանդաղատական հա-  
յեացք դուրս ցոլացին երկուստեք, սեւեռուեցան փոխադարձ միմեանց  
աչքերում, թեղի ծառի թփերը յետ բացուեցան և մեղ ծանօթ Սօնան  
արդէն թափ է տալիս մեծ մեծ ալանու դեղձերը, քաղլակի մէջ  
լցնում, ուսի վերայ դնում և դուրս գալիս թմբերից:

— Աղջի՛, տարի ա քաշում քո թումբ մտնել-դուս գա՞լի, կըշ-  
տամբում է մայրը:

— Ե՛հ, ես ի՛նչ զխտեմ, սրտատրոփ հեալով փախում է, քան  
թէ պատասխան է տալիս Սօնան ու քաղլակը վաչր դնում:

Բաւական թուպներ են անցնում, մինչ նորա կրծքի տախտակն  
իւր վերայ բարձրացած երկու բռնցկաշափի դնալինքով՝ դադար է  
առնում բարձր ու դած անելուց:

Սօնան նստել, դեղձ է կլկում: Երևանի նահանգի դաշտային  
մեծ այգելից գիւղերի աղջկանց սիրելի պարապմունքն է այս: Ալանի  
են անում նրանք. այդ տեղական աղնիւ մրգերից մինն է՝ ձմեռը նորա-  
փեսաներին զոքանչների կողմից թաւաղայ անելու: Ո՛չ այլ ինչ է

ալանին, եթէ ոչ կլպած, չորացրած, կորկղը հանած, ներսի դատարկութիւնը մանր ծեծած ընկուզով լցրած զեղձը:

Թնդում է Ալէքենց Բարսեղի կին Մարգարտի սիրտը, նա աչքի պոչով նայում է իւր հոգու ճրագ դստեր վարդանման ու շառագունած դէմքին և ցնծում է ուրախութիւնից: Մայրական դորոպն արտափայլում է Մարգարտի երեսին. հազար ու մի խառնաշփոթ, ուրախ ու տխուր մտածմունքներ կայծակի պէս սլանում են նորա գլխով: Նորա աղջիկը հասել է, երեսը 15 օրական լուսնի նման յետ է դնացել, սև սև աչքերը՝ երկայն ու խիտ արտեանունքներով՝ զուգապիութիւն են կազմել թանձր, թուխ թուխ, կեռ կեռ յօնքերի շեռ. իւր Սօնայի չափաւոր արծուի քիթը միանգամայն յարմարուել է կիսաձուռն, կիսակորիկ ծնօտի կամարի հետ, նորա կիստարի փոքրիկ բերանը՝ բարակ և թափանցիկ շրթունքների տակից՝ փայլին տուող լուսաշար մանրիկ ատամների հետ՝ անդիտակցաբար յետ է բացուում, որ կարմիր աչտերի ծայրերին շարունակ խաղացնի համեստ կուռական ժպիտը: Հապա լայն, փայլուն ճակատը, որի վերին մասը ծածկուած է մետաքսեայ թաշկինակի տակ. հապա երկայն, բարակ մէջքը, եղջերուի սիգապանծ պարանոցը, կանոնաւոր իրանը, 12 հաստ հիւսերը վրան ծածանող թիկո՞ւնքը. — բոլորը, բոլորը միասին առած՝ մի կատարելութիւն են ընծայել Սօնայի չքնաղ կազմուածքին, մանաւանդ այս բոյէին զեղեցկութիւնն իւր գահը դրել է նորա երեսին:

Մարգարտը լռիկ աչքերը դէպի երկինք բարձրացրեց, նորա շրթունքները հանդարտօրէն շարժեցան, նա աղօթք է մրմնջում, գոհանում է իւր բաժին Աստուածանից, Սուրբ Տիրամօր պաշտպանութեանն է յանձնում իւր անուշ դառնուկին և մի բարի բաղդ է խնդրում:

Իսկ աղջիկը:

Նա, ինչպէս ասացինք, երեսն արեմուտք, նստած է ծառի տակին, զեղձ է կլպում և ժամանակ առ ժամանակ աչքի պոչով դէպի հարաւ է նայում. նա կարծես վախում է, թէ իւր շարժմունքները կասկած կարող են զարթնացնել մօր սրտումը, դէմքըն իրան կը մատնէ, այդ պատճառաւ նորից աչքերը կորացնում է:

Մալքը բան չի՝ հասկանում, բայց Սօնան հանգիստ չէ, զող սիրտը դող. նա սպասողական դրութեան մէջ է:

Այո՛, Սօնայի աչքն երկար ժամանակ որոնում է խաղողի որթերի տերեւների միջից մէկին. նրա սիրտն իրեն կրճտոտւմ է. նա մեղաւոր է համարում իւր գլուխը, որ այդքան շուտ զրկեց մի ուրիշին երջանկութիւնից, որ կապել, կաշկանդել է նուիրական քարի վերայ իւր անմռունչ խօսակցին:

Պարտական էր Սօնան մտածել. մօտ մի ժամ է թողել է ինքը Հնձանաբազը, իսկ թեղի ծառի ոստերը դեռ յետ չեն բացուել:

Մարդարիտը ուինչ նկատողութիւն չարեց, երբ իւր աղջիկը սլառուական խոշոր դեղձերի կէսը միայն կնպեց, միւս կէսն շտապաւ ճղոտեց, սալայի մէջը շարեց, դրեց գլխին և թմբերի միջով ուղղուեցաւ դէպի միջնապատը:

— Ը՛ս... Ը՛ս... Ը՛ս...

— Ը՛ս... Ը՛ս... Ը՛ս...

Նորից թեղու ճղնիկները շարժուեցան:

Սօնան մի րոպէ կանգ առաւ քարի առաջին, գլուխը ծանր տարաւ ու բերեց դէպի աջ ու ձախ ուսերը՝ իբրեւ յանդիմանութեան նշան՝ և ակամայից պարզ հեղուկը՝ առաւօտեան ցօղի շիթերի նման՝ ցած իջաւ աչքերի աղբիւրակներից:

Նա նոր բան չարեց. նորա աչքերը հեռուեցին քարի վերայ արձանացած՝ քան թէ նստած էակի տեսանելիքին. դիմացի աչքերն արտասուներից ուռել էին: Սօնան նստեց. Սօնայի մատները նորից շփուեցան:

— Ամօթ չի՞, երեխայ ե՞ս, չնչաց Սօնան:

— Սպանի՛ր, որ չե՛մ կարողանում. ընչանք ե՛րբ, աս՛ա ու պրծի էլի՛, մի անգամ մորթի՛, կամ կենդանացրո՛ւ:

— Ա՛ աղայ, ո՛նց ասեմ, ախար էս անտէր երեսը միս ու արիւն ա, դաբաղխանի կաշի հօ չի՞, ախար մեր գիւղումն էսպէս գլուխը քարը տալ էլ լսել ե՞ս, ինչ որ մենք արինք:

— Քո կամքը չի՞, թէ չես ուզում, քացով տո՛ւր, դէն քցի՛:

— Ամա՛ն, Սամիտն ջա՛ն, գլխովդ պտիտ դնամ, էդ խօսքն ինձ մի՛ ասիլ, իմ օրն առանց քեզ սեւ ըլնի՛:

— Բա՛ս, ես ո՛ր քարովը տամ իմ գլուխը, երկու երեք կօլօլ տարի ա զուլ ես շինել, ոտդ կոխած տեղն երեսս եմ դնում, աչքդ թեքած վախտը մահս եմ միտս բերում, գիշերը քուռն ա փախել, ցե-

բեկն անդնջում կեչեղակ եմ դառել, օրերն իրար քամակից չարխի նման գլորուում են, ընկեր-տղէքանց միջին մատով ցոյց տալու եմ դառել, ոչ բերանումս ա լեզու մնացել, ոչ գլխումս խելք, նրանք հազար են հարցնում, ես մին չեմ կարողանում պատասխան տալ. մի ժամանակ գիժ մոզի էր անումս, հիմի ուրբաթախօս են դրել, ուզում ես ընչանք կենամ, որ գեղի գազանները, իշխաններն ու քէթխուղէքը քեզ յափշտակեն, իրանց լոբբադ, պարծենկոտ, հաւաքող տղէքանց ճանգը քցեն, ես էլ էս գտակը դիխս՝ Սամփսոն անումով, ողջ առողջ գետնի երեսին համ ինքս ման գամ, համ իմ թշնամին. նա էլ երեսիս բան չասի, հընկեր տղէքանց մօտ պարծենայ, թէ էս մի հոգեորի կաքաւն իմ թոռն ընկաւ. իրիկունն էլ գայ քեզ մօտ, մնին տասն աւելցնելով՝ իր գլուխը գովի, ինձ վրայ ծիծաղայ. դու էլ քիթդ թափ տաս ու ասես՝ ա՛չքն էլ հանեցիր, նա ի՛նչ իմ մարդացու արժան տղայ էր....

— Սամփսոն ջա՛ն...

— Յետոյ դու էլ քո թայ ու թուշ (հասաւալից ընկերէր) հարսն ու աղջիկների մօտ բերնէ բերան քցես, ասես՝ որ երեք տարի շրւաքիդ հետ քաշ էիր տալիս, վերջը բերանս բաց թողիր, քաղցր թիքի տեղակ թող ու փէյին փշեցիր աչք ու բողազս...

— Ամօ՛թ քեզ, Սամփսո՛ն, որ երկու տարի ա, անպարան կապել ես ինձ ոտիցդ, քաշ ես տալիս ու էլի վրէս կասկած ունիս:

— Աղչի՛, կասկած չեմ անում, գիտեմ, որ թաղաւորի տղի հետ ինձ փոխիլ չես, բայց քանի՞ քօռ կապէի աժի: Էս օր աշունք ա, Աստծու բարիքը վերեքուում (հաւաքաւա՛մ) չի, էս տարի գիւղումն ինչքա՛ն տղայ ու աղջիկ կան, որ քթերն անջախ են սրբում, պսակուելու են. քեզ յայտնի ա՝ որ երեք տարի ա, ողջ գեղի աչքը քո վրէն ա, սիրունութիւնդ էլ որ յետ դնենք՝ հօր միտուճարութիւնդ, էսքան մուլք ու կոյանքը քեզ ա մնալու, եղալի թիքայ ես. տեղիցը վեր կենողը դատած ապրանքի ա ման գալիս, թէ որ էզուց հէրըդ եզան նման ախանջիցդ բռնի, տայ մի գլափնու կամ սուգիի տղի, դու ի՛նչ կանես, կարա՞ս ծարրուն հանիլ, կարա՞ս հակառակիլ:

— Վա՛յ դիխս, Սամփսոն ջա՛ն, վատ վատ, սիրտ պատռացնող խօսքեր մի՛ ասիլ, Աստուած մի՛ արասցէ, Աստուած ինձ էն օրը մահ տայ:

—Տօ՛, ի՞նչ մի՛ արասցէ, դու չը գիտե՞ս, որ երեք տարի ա տո՛ված գիլանոնց նման քամակիցդ հոտոտալով ման են դալիս, չը գիտե՞ս, որ ոտդ 13 տարին դրիր թէ ոչ, օրը մին ա, ինամսօսներդ տասնուամի՛ն:

—Ղորթ ա՛, բաց տեսնո՞ւմ ես, որ հէրս չի տալիս:

—Տօ՛, էն օրն ասում էր աղջիկս ջահէլ ա, էս օր ի՞նչ խօսք ունի. տօ՛, էս տարի որ քեզ չը պսակեց, էս ձմեռ մեր քար ու քանդ գեղի նամարդ ազալ տղէքը ձեր մարագումն անկրակիլ խոտ կը թողա՞ն, ձեր բաղերի բարունակներն ու տաշնակները քօքի վերայ կը դա՞ն, ձեր գոմումը տաւար, ձեր թառերի վերայ հաւեր կը թողա՞ն. չե՞ս իմանում, որ մի կարգ ջահէլներ կան, որ տնքանդութիւնից ու գողութիւնից աւելի՝ ձեռքներիցը բան չի գալի՞ս. չե՞ս իմանում, որ էդ վախով ալապտորակները չօլումը մուկն են դա՞նում, գեղումը կատու հիմի էլ որ քուչոյն անց ես կենում, դո՛ւ ես բերանների մատաքը:

—Ե՛հ, հողեմ դրանց գիծ ու խեղճն էլ՝ իրանց վրայ թըրողինն էլ. քո մի մուռտառ մազը կը փոխեմ նրանց գլխի հէ՛տ:

—Եդ ես շա՛տ լաւ գիտեմ, բաց թէ որ խօսքը քեզ հասցնեն, քո կամքը հարցնեն. ոնց որ բռիս միջին գիտեմ, որ էզուց հէրդ իր մուլքն երուելուց ու կորատուելուց ազատելու համար՝ աչքերը հուպ ա տալու՝ քեզ գիլանոնց ուխը քցելու:

—Դէ լա՛ւ, դուք էլ շատերիցը մինը, թո՛ղ քո հէրն առաջկըտրուկ անի, դաց ինձ ուզի. հէրս էլ կը տայ, շէնքով շնորհքով տղայ ես. էլ ընչի՞ ես ինձ զօւ անում, հոգիս կատիկս հասցնում, որ ես մօրս ասեմ:

—Աղչի՛, բա՛ դու չե՞ս իմանում, որ հիմի շնորհքն ու խելքը չեն հարցնում, հէրդ դի՛ժ ա, որ սուղիա—տանուտէրների դնչերին տայ՝ յետ դարձնի, թէ ես դասաբ Գալօյի տղին եմ աղջիկ տալու:

—Յիսե՛մ սուղիէքանց գլուխը, նրանց ամենքի տղէքն էլ մի մի բլնդեազ անշնորհքներ են, քո ոտը չ՛աժեն, նրանց ո՛վ կառնի:

—Տօ, ջանի՛դ մեռնեմ, տղի լաւութիւնին ո՛վ ա մտիկ տալիս. սուղիէքն են քո հօրը պէտքը, որ էզուց գեղամիջին քամակին կանգստեմ ահա հարկաւ հրեշտակի պէս. դու որ սուղիէքանց, կամ գլաջեռն են պահապան հրեշտակի պէս. դու որ սուղիէքանց, կամ գլաջեռն հարս դառնաս, հօրդ ոչ ով չի կարող ասել, թէ աչքիդ վերեն

ունք կայ, ճնից ու արեւից աւել՝ ձեր բալին ոչ ոյ չի ոտ դնիլ. զը-  
զիր-եասաւովս ձէն ձեր քուչումն էլ չի լսուիլ:

— Բա՛ս քո հօրն ասա՝ ամենի աչքն էլ հանի, էգուց դայ հօ-  
րիցս ուզի, նշան դնի, բոլորի բերանն էլ ցխի:

— Հաղար հետ եմ քեզ հասկացրել, որ իմ հէրը ձեր դռնովն  
անց չի կենալ, նա գիտի, որ դու մեր ատամի ծամ չես, նա իր ո-  
տըն իր կարպետից դուս չի՝ մեկնիլ:

— Ընչի՞, դուք ո՞ւմնից էք պակաս էս գեղումը, ձեր կարողու-  
թիւնը մերիցն ընչո՞վ ա պակաս, մենք էլ երեք բաղ ունինք՝ դուք  
էլ, ձեր արտերը մերիցը շատ, ձեր տունը մերիցն աւելի լաւ, քո  
հօր պատիւը գեղամիջումն իմ հօրիցն առաւել:

— Եդ հօ՛ էդպէս ա, բայց հէրդ խելքը հացի հետ չի կերել,  
որ գլաջլուռն Գալ-ափունի հետ փոխի:

— Բաս ի՞նչ անենք:

— Ելի ասե՞մ, երկու տարի ա գլխումդ հալում եմ, դեռ էլի  
հարցնում ես. հասկանում եմ, դու ինձ շինել ես մի հասարակ ձե-  
ռի աղլուխ, քիթդ կը սրբես՝ կը սրբես՝ ու մի օր, երբ արըշմէ խոս  
աղլուխը ձեռդ կ'ընկնի, ինձ դէն կը չպրտես:

— Սամփսոն ջա՛ն, խեղճ արի՛:

— Հա՛, հա՛, ի՞նչ ես կորցնում, երկու երեք տարի ա՛ քո շունն  
ես շինել, քամակիցդ քցել, մի օր մի մնի կտոր չես քցել բերանս.  
երկու տարի ա, ոտիդ տակին փռուած եմ, թո՛ղ էս անլիզու քարը  
լիզու ըլնի՝ վկայի, ձեռդ բռնելուց աւել ընչի՞ եմ արժանացել.  
շունչդ շնչիս կպե՞լ ա, երեսս երեսիդ զիպե՞լ ա, բերանս բերանիդ  
գոն առե՞լ ա. շորիդ էլ չեմ համարձակուում դիպչել. քարասի՛րո, թէ  
որ սրտումդ սէր կայ, ե՞րբ խնայեցիր, ե՞րբ մօտ նստեցիր, ե՞րբ  
թողացիր մատս երեսիդ կպչի, ասա՝ ե՞րբ: Մի ուրիշը որ ներս մըտ-  
նի Թուխ-մանուկի տունը— էս Հնձանաբաղը, մեզ էսպէս սեսնի, չի  
ասի՞լ՝ խռոված տէքերակիւններ ենք. էս քարն էլ էնքան մեծ ա՛ որ  
մեր արանքումը հաստափոր գէլ-Մուկուչին տեղ կանի:

— Սամփսոն ջա՛ն, չի՞ ես աղջիկ եմ:

— Սաքի նոր խօսք ասեցիր, առաջինն ա՛ որ խուլ ականջս  
լսում ա, դեռ մի սաղ տարի հոգիս զուս եկաւ աչքով ունքով թը-  
փերի տակիցը, ծառերի շուաքիցը քեզ հասկացնելով, որ նեքսես

օջաղ ես վառել. խրանած եղան նման օխտը հաւողի թումբը մին էիր թռչում, մօրդ կուշտն ընկնում. կամաց կամաց Աստուած սիրտդ դուր թցեց, սկսեցիր մի տարէն ճամփայ հեռուից ջանդալներէ (խախ) արանքից՝ գող կատուի պէս՝ մարաղ մտնել, ինձ մտիկ տալ. քիչ քիչ ոտդ յառաջ դիր, ի հարկէ, քարասիրտ հօ չէիր, տեսնում էիր, թէ ո՞նց եմ շինք թեքել, անխօս քեզ պոնկնոտում, աղաչանք, պաղատանք անում, ո՞նց էի մղկտում:

— Հերիք չի՞, Սամփոն:

— Յետոյ հը՛...հը՛...հը՛...հը՛... քիչ, քիչ, քիչ, քիչ եկար կանգնեցիր մեր միջնապատի տակին՝ ձեր թփերի միջին ու շինքդ ծռած մունջ մունջ մնացիր: Ախ, քո ցաւը տանեմ, էն ի՞նչ օր էր ինձ համար, ի՞նչ պատկերք էիր դառել, ի՞նչպէս էիր կարմրել առաւօտուաննոր յետ բաց էլած կոկոմ վարդի. նման ու վռշնել, քիչ էր մնացել՝ ամանչելուցդ երեսիդ կաշին պատռուի, արիւնը գնաց: Ըսկի մտքիցս չի ընկնում, ոտներս գետնիցը կտրուել էին, վերացել էի, հէնց իմացայ, թէ էս ա հրեշտակս զրկումս ա, էս ա ջէյրանս իր ոտովն ա եկել, անումդ տուի, Սօնա ջա՛ն՝ մղկտացի Գառան նման շինքդ ծռել կաննել ես, ոչ ձէն՝ ոչ ձուռ:

— Է՛հ, Սամփոն, հազար հետ ասել ես:

— Կը թողա՛ս մօտդ դամ, հարցրի քեզ. — ձէ՛ն չը կայ: Սօնա՛, ախար ես քեզ սիրում եմ, ասեցի: — Դու քարացել, տեղդ մխուել ես:

— Աղչի՛, մի ձէն հանի տեսնեմ, դու էլ ինձ սիրում ե՞ս, թէ չէ, հարցրի քեզ: Է՛ն ինչ քաղցր հրուպա էր, երկնային թագաւոր, բերանդ փակ մնաց, բայց մեռնե՛մ էդ ծիծեռնակի թև աչքերին, որ մի մտիկ տալով՝ սրտիդ սըռը (գողգոթի) քեզանից դուս խլեցին. աչքերդ քեզ մատնեցին. էն ի՞նչ նետ ու զիւլլայ էր, որ աչքերիցդ մխեցիր սրտիս մէջը: Զանիդ մեռնե՛մ, ասեցի, ու ոնց որ թագին ծլունդ ծլունդ անելով՝ երկու զօլաջ (հօ 2 սօթէն) տեղը մին ա թռչում, իր որսի քամակիցն ընկնում, ես էլ պատի գլխովն ինձ ձեր բաղը թցեցի:

— Շա՛տ ճանդդ ընկաւ, ա՛յ:

— Հեռու չէիր փախչիլ, համա քո մի մատը թափ տալն ինձ անշունչ քար շինեց, տեղն ու տեղս թողեց. անիրա՛ւ, ո՞նց շունչդ բաղի ափումն առար:

—Տեսա՞ր, որ երկ' օրից էլի յետ եկայ, քիչ, քիչ թողացի ինձ մօտ դաս, մէնակ հեռու կանգնես:

—Բայց որ ձէ'նիդ չարժանացայ:

—Ընտուր հնարքն էլ դար, էլ ի՞նչ ես ուզում:

—Մեռնեմ Թուխ—մանուկի զօրութիւնին, որ թեղի ա դառել, ճղքճղքնոտել, Հնձաբանագի վրայ փռուել, իսանաորդու չի թողում իր փէշի տակը մտնել: Հալբա'թ' իր կամքն էր, որ մտքումս տուն տուեց, ինձ դպա իրան քաշեց: Միտք անելով հողիս բերանս հասաւ, թէ ո՞ր տեղ մի խոլվաթ, աչքից հեռու տեղ գտնեմ, քեզ տանեմ, որ մեր գալգնալն աշկեարաց չըլնի. կարծես, մինը կուռս քաշումա դպա թեղու փռչակը. տօ', մի մանեմ, տեսնեմ՝ ի՞նչ կայ էստեղ, ասեցի, ու երես ու ձեռ ճղոտելով ներս մտայ, աղինջներն յետ բաց արի և էս տափակ սև քարը մեզ համար նստելու տեղ ջոկեցի:

—Ես էլ ի՞նչ շուտ կամ եկա՛ց:

—Անիրա՛ւ, դու մտքումդ դրել ես ինձ ողջ ողջ գերեզման դնել. երկու շաբաթ օձի լիզու թափեցի՝ ընչանք կարողացայ երկու մատդ բռնել ու թեղու տակը մտցնել:

—Դէ՛ համ տարար, համ ձեռներս խաղալիք ես շինել, էլ ի՞նչ ես ուզում:

—Ուրի՞շ:

—Ուրի՛շ՝ էլ տո՛ւս՝ քանի նշանուել չենք, ըսուեց աւելին պա՛ս, ազապ աղջիկն անկտրիլ շամամ ա:

—Բաս մարդ երկու տարի շամամը ձեռումս ունենայ ու նրա հոտին չարժանանա՞ց: Սպանի՛ր ինձ, Սօնա՛, էլ չեմ կարող, կուզես ճշա՛, աշխարհքը դլխիդ հաւաքիր, ես պտի իմ շամամիցը հոտ քաշեմ, ի՞նչ ես ասում, ասա՛, հրամայի՛ր, վճռի՛ր, թո՛ղ մի հոտ քաշեմ քեզանից, թո՛ղ մօտ նստեմ, քարի վրայ արանք չը մնայ, մի երեսս երեսիդ առնի, Սօնա ջա՛ն:

Սօնէն լուռ էր:

—Սօնա՛, մօտ նստե՛մ:

Ոչինչ ձայն:

Սամփսոնը մօտեցաւ:

Սօնի կողմից ոչինչ չարժում, կամ բացասութիւն:

—Սօնա՛, կը թողաս կուռս շինքովդ պատ տա՛մ:

Սօնայի պարանոցն ինքն իրեն ծռուեց դէպի Սամփոտնը:

Նրանց շրթունքները մօտեցան: Երկու ամբողջ տարուայ մէջ առաջին համբոյրն էր, որ Սամփոտնը քաղեց իւր սիրելուց: Կուսակա՛ն սուրբ համբոյր:

— Հիմի՞ ինչ ես ասում, բոպէական զրկախառնութիւնից ցետոյ հարցրեց Սամփոտնը:

— Խնչ պէտք է ասեմ, էս իրիկուն սևերես մահապարտի պէս պտի մօրս ոտներն ընկնեմ, ամեն բան իրան յայտնի անեմ: Կասեմ. ա՛յ մէր...

Սօնան դողում էր ամբողջ մարմնով, խօսքերը կցուեցան ատամներին մէջ:

— Խնչ ես սիրտդ կոտրում, Սօնա ջա՛ն, ընչի՞ փոշիմանածի պէս դառար, թէ չես ուզում, թէ ես արժանի չէի քո մի պաչին, կարող ես մի շահ-սիլլայ տալ, դէն քցիլ ինձ, գնալ քո սրտի սիրածին ուղիլ: Փառք Աստծու, իրան էլ լաւ յայտնի ա, որ էս օր երկու տարուայ մէջ առաջին անգամը շունչս շնչիդ, պռօշս պռօշիդ դիպաւ. վարդի տերեւն էլ մի հետ ձեռք տալով չի սալարում, չի՛ չմքում. թէ մի պաչով աչքիցդ ընկայ, թէ չես ուզում իմն ընել, կարծիր՝ թէ Աստուած քեզ մի աղպէր ա տուել՝ օտարութիւնի մէջ էր, քուբը կարօտել էր, եկաւ, գրկեց, համբուրեց, սրտի փափազն առաւ, ուրախութիւնից սիրտը պատռուեց, մեռաւ: Հէնց իմանում ես՝ դժուար բան ա գլուխս քեզ մատաղ տա՛լը, էստեղ նստի, գնամ մեր հնձանից դամէս բերեմ, կը տեսնես:

Սամփոտնը վեր կացաւ և գնում էր:

— Ո՛չ, ոչ, սխալուում ես, Սամփոտն, տեղդ պինդ նստի, կուռը քաշեց Սօնան, դուր ես դամի քամակիցը գնում, դու դամէն բերնումդ ունիս, որ սրտիս մէջն ես ցցել ու խառնում, սիրող սրտի վրայ ծիծաղում. ես փոշիման չեմ քեզ սիրելու համար, դու իմ գլուխն ես, իմ ջանն ես, իմ սիրտն ես, գլխիս տէրն ես, դու էդ մի պռօշը պռօշին կպցնելովդ չի տիրեցիր իմ սրտին, ի՞նչ երկու տարի, ընչի՞ չես ասում երե՛ք, չո՛րս, հի՛նդ... իմացիր, երեխութիւնից Աստուած մեզ իրար համար ա արշայ քցել, տներս ձեր տանը՝ բաղերս ձեր բաղին կպցրել, որ իրար հետ մեծանանք, իրար հետ խաղանք, իրար հետ մեզ ճանանչենք, իրար սիրենք, իրարից անբաժան մեռնենք, դրախտ թէ դժոխք՝ իրար հետ մտնենք. երեխութիւնի սէրն

ուրիշ էր, մենծացանք՝ ուրիշ փոխուեց, բայց երկսի անուան էլ սէր ա, առաջինը վերջինիցը պարզ սրտով՝ վերջինն առաջինիցը խեղօք մտածած, չափ ու ձև արած, քաղցր ու հաստատ:

— Թէ էիպէս էր, էլ ընչի՞ մի պաշը քեզ փոխեց, ընչի՞ ուրի տերեւի պէս դողում էիր քամի չէլած տեղը:

— Ա՛խ, Սամփսոն ջան, հիմի եմ հասկանում, որ տղի ու աղջկայ մէջը սարեր կան, հիմի եմ զլխի ընկնում, որ ինչ բան տղի համար հեշտ ա, ամօթ չի, աղջկայ համար սար շուռ տալ ա. քեզ համար ոնց որ մի կում ջուր կուլ տալ՝ դժար չի ամեն տեղ նստել, ասել՝ որ Սօնին սիրում ես, Սօնին պաշել ես, Սօնին ուզում ես, բայց ես իմ ծնող մօր մօտ էլ քաշուում եմ: Նրկու տարի ա՝ դու ինձ զօռ ես անում, երկու տարի ա՝ ամեն օր մտքումս դնում եմ իրիկունը սիրտս բաց անել մօրս մօտ ու մոլթը կոխելուս, լեզուս խալունում ա, բերանս փակւում, Զաքարիայի պապանձումն ա գալի վրէս, ամօթն աչքերս կոխում ա, արտատունքն ինձ խեղդում ա, ընկնում եմ տեղաշորիս մէջ, զլուխս բարձի տակին պահում: Ընչանք էս օր էլ իմ տեղերն ամենքիցը շուռ ա վեր քաղւում, թէ ի՛նչ ա, մէրս յանկարծ բարձիս ձեռը չը տայ՝ տեսնի որ թաց ա: Ա՛յ, հէնց էդ միտքն էր հիմի, որ ինձ դողմանի բերեց, ըն՛ու՛նքի հաստատ մըտքումս դրի՝ էս զիշեր անց չը կացնել, ամեն բան մօրս ասել, ոտներն ընկնել, աղաչել, պաղատել, որ մի հնարքով հօրս բան հասկացնի, մեր նշանը շուռ վրայ բերի ու գեղիս շուն ու գիլանոնցից ինձ ազատի: Ինձ համար Սամփսոնիս կոխած հողը հազար գլաւնի, սուղիա, հոգաբարձու, դատաւոր-մենծաւորի զլխից լաւ ա, դու միամիտ կաց:

— Ես մեղայ Աստծու, հողի՛ ջան, զլուխս քարովը տուի, ես հէնց իմացայ, թէ պաշի վրայ հերսդ եկաւ:

— Որ էլ մտքովդ փիս փիս բաներ անց չը կացնես Սօնիդ վրայ ու կասկածանք չանես, էս ես՝ էս իմ զլուխը, իմ սաղ ջանս, իմ մարմինս: Որ դու էլ սրանից յետոյ դամի ու խանչալի ետեւից չը գնաս, Սօնիդ համար Սիմաւոն ծերունի դառնաս՝ էս էլ թող ըլի՛ երկու:

Սօնան այս անգամ ինքը փաթաթուեց Սամփսոնին:

(Կը չարունակուի)